169 ԿԻՐԱԿԻ 3 ՕԳՈՍՏՈՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 3 ՕԳՈՍՏՈՍԻ № 169

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

ասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
IFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝

ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 Թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 Թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վ. [illegible]։

ՊԱՐՏՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ

րեխաները պատրաստվում են պետական բոլոր դպրոցները մտնելու համար (տղաները՝ մինչև II դասար., աղջիկները՝ մինչև IV դասար.)։

Ուսումնարանի նպատակն է ներդաշնակօրէն զարգացնել մանկան մտաւոր բոլոր ույժերը։ Ուսումնարանին կից կայ այգի բնախօսական գործնական պարապմունքների համար։ Ամէն օր շարժական խաղեր և մարմնամարզութիւն։ Դասարանից դուրս եղած պարապմունքներն ու խելացի զուարճութիւնները դրված են ընդարձակ կերպով։ Ձեռագործի նկաrխ դասարան. զամբիւղահիւսութիւն, լէպկա, նկարչութիւն և այլ աշխատանքներ։ Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբ. 2-ից։

տո. (կ.) 745. 5—1

Թիֆլիսի Առևտրական Բանկը

րանով յայտարարում է ի գիտութիւն հանրութեան, որ ինքն ընդունում է դրամական փոխադրութիւններ Թիւրքահայաստանի ՎԱՆ և ԷՐԶՐՈՒՄ քաղաքները։

(կ.) տո. 707. 4—4

ԳԻՄՆԱԶԻԱ Վ. Ա. ԼԵՎԱՆԴՈՎՍԿԻԻ

Պետական գիմնազիաների իրաւունքներով, երկսեռ աշակերտների համար։
Գունիբսկայա, 10, սեփ. տուն, տելեֆ. 754

Ընդունելութեան քննութիւնները սեպտեմ. 1-ին և 2-ին
Վերաքննութիւնները » 3-ին
Մաղթանք » 5-ին
} առաւ. ժ. 9-ին

Գիմնազիայի գրասենեակը բաց է օգոստ. 16-ից առաւ. ժամը 11-ից մինչև ցեր. ժ. 2-ը։

(հ.կ.) տո. 744. 10—2

Թիֆլիսի I Առևտրական Դպրոցի Վերատեսուչը

րանով յայտարարում է, որ վերաքննութիւնները տեղի կունենան օգոստոս ամսի հետևեալ օրերը.

21-ին—Ռուսաց լեզու (գրաւոր)՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դասար., Թւաբանութիւն՝ պատրաստական և I, II և III դասար.։

22-ին—Ռուսաց լեզու (բանաւոր և գրաւոր)՝ 1-ին, 2-րդ, 3-րդ դաս. և (բանաւոր) 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դաս., մաթեմատիկա՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դաս.։

23-ին—Գերմաներէն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ դաս., Ռուսաց լեզու՝ պատրաստականներում։

25-ին—Գերմաներէն՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ դաս., աշխարհագրութիւն, բնագիտութիւն և ֆիզիկա՝ բոլոր դասարաններում։

26-ին—Ֆրանսերէն՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ դաս., պատմութիւն՝ բոլոր դասարաններում։

27-ին—Կրօն՝ բոլոր դասարաններում, տեղական լեզուներ՝ բոլոր դասարաններում, մասնագիտական առարկաներ՝ 5-րդ և 6-րդ դաս., նկարչութիւն՝ 6-րդ դաս.։

Ընդունելութեան քննութիւնները պատրաստական, I և II դաս. տեղի կունենան օգոստոսի 27-ին և 28-ին բոլոր առարկաներից, իսկ միւս դասարաններում՝ վերաքննութիւնների օրերը։

5-րդ 7-րդ և 8-րդ դաս. ընդունելութիւն չի լինի։ Ստորին (այբուբենական) բաժ. պատրաստ. դասար. ընդունվում են 7—9 տարեկան երեխաներ առանց քննութեան։

Այն աշակերտները, որոնք վերաքննութիւնների օրերը չեն ներկայանայ առանց որևէ յարգելի պատճառի, այլ ևս քննութեան չեն թողնվի։ Քննութիւնների սկիզբը առաւօտեան ժամը 8½-ից։

Մաղթանք տեղի կունենայ և պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 8½-ին։ (3, 12) տո. 734. 3—2

Թիֆլիսի Քաղաքագլխի Պաշտօնակատարը

րանով դիմում է Թիֆլիսի բոլոր ազգաբնակութեանը, դասային, հասարակական, վարկային և այլ ընկերութիւններին, կազմակերպութիւններին և մասնաւոր անձանց, ջերմ կերպով հրաւէր կարդալով՝ օգնել պատերազմի պատճառով տուժած անձերին։ Ներկայ օրերին իւրաքանչիւր քաղաքացու պարտականութիւնն է օգնութիւն ընձեռել այն մարդկանց, որոնք հայրենիքի համար զոհ են բերում իրանց կեանքը՝ տանը թողնելով ընտանիքը և երեխաներին։ Թող իւրաքանչիւրը օգնէ ինչով կարող է։ Քաղաքային Վարչութիւնը հաւատացած է, որ Թիֆլիսի ամբողջ ազգաբնակութիւնը ջերմ արձագանք կը տայ իր կոչին և օգնութեան կը հասնէ կարիքաւորներին—դրամով, իրեղէններով և մթերքներով։

Նուիրատւութիւնները հանգանակելու և նրանց կարգադրելու համար՝ Քաղաքային Ուպրավայում, քաղաքագլխի պաշտօնակատարի նախագահութեամբ և զանազան վարչութիւնների, հասարակական և դասային հիմնարկութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ կազմվում է առանձին կոմիտէտ, որը այս օրերս կը ձեռնարկէ իր գործողութիւններին։

Նուիրատւութիւնները դրամով, իրեղէններով և մթերքներով ընդունվում են ամէն օր, ի բաց չառած նաև տօն օրերը, Քաղաքային Ուպրավայում առաւօտ. ժամը 10-ից մինչև ցեր. ժամը 3-ը։

Նուիրատուների անուանացուցակը կը տպվի լրագիրներում։ տո. 747. 2—1

ԴՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ասիստենտ Բերլինի համալսարանի Charité *հիւանդանոցի*

Շարունակում է ընդունել Գերմանիա դիմող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսօրների հետ։

Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.

(հ. կ.) տո. 391. 100—42

ՆԿԱՐԻՉ
Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԱԼԲՈՄԸ

◆ գունաւոր ◆

Լոյս տեսած Վիեննայի Գաֆիչէ Քոմստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում։

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է *Թիֆլիսում մեծաքանակ—Մանթաշեանցի խանութում (Մա- [illegible] կցզի), իսկ հատով—«Բլան է Նուար» խանութում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում։ Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 30%։*

(կ.) տո. 122. 25—25

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, *տելեֆոն* 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ [illegible], նոյնպէս և վիրաբուժութեան կարօտ ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանանց [illegible] ամէն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Ցարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Ալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(հ. կ.) տո. 868. 100—77

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

(Ասսիստենտ Բեռլինի պրօֆ. Պօզների)

ԱՐԴԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԲԵՐԼԻՆԻՑ *և մայիսի 1-ից ընդունում է հիւանդներին* ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ։ *(Կովկասեան հանքային ջրերում)։*

Հասցէն՝ Пятигорскъ, Елизаветинская ул. д. Архипова, за соборомъ.

(կ. հ.) տո. 104. 50—49

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ

Արժանացած մեծ պարգևի։ Վաճառվում են ԹՈՒՍԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում։

Ֆաբրիկային իսկական գներով։

Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պաստառներ վերջին ոճի, ինչպէս էժանագիններ, նոյնպէս և թանգարժէքներ։ Բացառապէս լրիւ չափն է 11¼ արշ. երկար.։

Սէզօնային նմուշները ուղարկվում են Զ Ր Ի և օտար քաղաքներում։

Բաժանմունքը Թիֆլիսում.

Обои фабрики Бр. Тарнополь. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3—55.

(հ. շ.) տո. 309. 50—33

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
ՅՕԳՈՒՏ „ՄՇԱԿԻ" ՖՕՆԴԻ

հետևեալ գրքերը.

1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՑԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.

Վերոյիշեալ հրատարակութիւններից միմի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

(Պաշտօնական)

Պետերբուրգ, 1 օգոստոսի։

Անհրաժեշտ գտնելով սահմանել այնպիսի կանոններ, որոնք ղեկավար հանդիսանան Ռուսաստանին ներկայ պատերազմի ժամանակ, հրամայում ենք՝ դադարեցնել այն արտօնութիւնների ու առանձնաշնորհումների գործողութիւնը, որոնք տրված են թշնամի պետութիւնների հպատակներին պայմանագրերով, ձերբակալել թշնամի տէրութիւնների հպատակներին՝ ինչպէս իսկական զինւորական ծառայութեան մէջ գտնվողներին, այնպէս և զինւորակոչին ենթականերին՝ իբրև պատերազմական գերիների, և իրաւունք տալ պատշաճ իշխանութիւններին արտաքսել վերոյիշեալ տէրութիւնների հպատակներին ինչպէս Ռուսաստանի սահմաններից, այնպէս և նրա առանձին վայրերի սահմաններից, ինչպէս նաև կալանաւորել և ուղարկել այլ նահանգներ։ Թշնամի տէրութիւնների հպատակների մուտքը Ռուսաստան թոյլ տալ միմիայն պատշաճ իշխանութեան առանձին վկայականով։ Բռնել թշնամի տէրութիւնների առևտրական նաւերը ռուսական նաւահանգիստներում։ Յիշեալ նաւերից նրանց, որոնց կառուցուածքը ցոյց է տալիս, թէ նրանք պատերազմական ռազմանաւերի են վերածված, գրաւել ծովային աւարառումների կանոնադրութեան 10-րդ յօդուածի կարգով։

Իրաւունք տալ չէզոք տէրութիւնների հպատակներին անարգել շարունակել առևտրական յարաբերութիւններ ռուսական նաւահանգիստների և քաղաքների հետ զինւորական և զինւորա-ծովային իշխանութիւնների կարգադրութիւնները կատարելու պայմանով։

Ի նկատի ունենալ, փոխադարձութեան պայմանով, պատերազմի դէպքում հրատարակվող կանոններից անկախ, միջազգային հետևեալ պայմանագրերի որոշումները. 1856 Թ. ապրիլի 4—16 ծովային դեկլարացիայի (Պարիզ). 1868 Թ. նոյեմբ. 29 ու դեկտ. 11-ի դեկլարացիայի (Պետերբուրգ), վերաբերեալ պայթուցիկ գնդակների գործադրութիւնը վերացնելուն. 1899 Թ. յուլիսի 17—29-ին Հաագայում կայացած խաղաղութեան առաջին կոնֆերենցիայում ստորագրված դեկլարացիաների, այսինքն այն դեկլարացիայի, որ արգելում է գործածել խեղդող վնասակար գազեր տարածող ռազմանիւթեր, և այն դեկլարացիայի, որ արգելում է գործածել մարդու մարմնի մէջ դիւրութեամբ բացվող գնդակներ. 1906 Թ. յունիսի 23-ի և յուլիսի 6-ի կոնֆերենցիայի (Ժընէվ), վերաբերեալ ցամաքային պատերազմի ժամանակ հիւանդ ու վիրաւոր զօրականների վիճակը բարելաւելուն. 1907 Թ. հոկտ. 5—18 Հաագայում տեղի ունեցած երկրորդ կոնֆերենցիայի ստորագրված պայմանագրերի.

Կառավարիչ սենատը չի յապաղի ի կատարումն սրա պատշաճ կարգադրութիւնը անելու։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրված է՝

«ՆԻԿՈԼԱՅ»

Պետերհօֆ, 28 յուլիսի 1914 Թ.

Ծցեց՝ մինիստրների խորհրդի նախագահ ստատս-սեկրետար Գորեմիկին.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 օգոստոսի

ԼՕՆԴՕՆ.—Բրիւսէլից հաղորդում են, որ Հալէնի մօտ տեղի ունեցած յաղթական կռուի մասին եղած տեղեկութիւնը հաստատվում է պաշտօնապէս։ Այս յաղթանակը ապահովում է բելգիական զօրքին ապագայ ամէն տեսակ անակնկալներից։

ԼՕՆԴՕՆ.—Բրիւսէլից հաղորդում են, որ Գիտրէցի շրջակայքում տեղի է ունեցել նոր ճակատամարտ, որի ժամանակ բելգիացիք վանել են 400 գերմանացիների յարձակումը։

ԲՐԻՒՍԷԼ.—Բաւական խոշոր ֆրանսիական ույժեր մտել են Բելգիա Շարլէլէրուայի միջով և դիմում են դէպի Ժամբլու։

ՓԱՐԻԶ.—Զինւորական մինիստրութիւնը պաշտօնապէս հաղորդում է. թէ ճշդվում է բելգիական հեծելազօրի մեծ աջողութեան տեղեկութիւնը։ Վանվելով բոլոր դիրքերից, գերմանացիք կրեցին խոշոր կորուստներ։

Լօտարինգիայում թշնամու դիրքերը հետախուզող ֆրանսիական աէրօպլանը ենթարկվեց գերմանական երկու աէրօպլանների հալածանքին։ Ֆրանսիացի օդագնացին աջողվեց խուսափել և աջողութեամբ իջնել ֆրանսիական զօրագծի վրա։

Ֆրանսիացիք տիրապետեցին Վօգէզի լեռներին և պահեցին իրանց ձեռքում 5 օր, չը նայած գերմանացիների ուժեղ հակայարձակումներին։ Բօնօմ, Սէն-Մարի և Սաալ լեռնանցքներում ֆրանսիացիք վանել են բոլոր յարձակումները և գրաւել են գերմանացիների գնդակացիրները։ Ֆրանսիացիք իշխում են Բրեւշ հովտում։

Ֆրանսիական երկու գումարտակ, որոնք գրաւել էին Լագարդը, նեղվեցին մեծ թւով գերմանացիներից։

ՓԱՐԻԶ.—Լիէժի տակ բելգիացիք ձեռք ձգեցին աւելի քան 2000 գերի, որոնց տեղաւորելու հոգսը յանձն է առել ֆրանսիական կառավարութիւնը։ Ֆրանսիացի զօրքերը գերել են աւելի քան 1500 հոգու։

Ֆրանսիական դրօշակով թռիչքներ կատարող գերմանական մի աէրօպլան երեաց այսօր առաւօտը Վէզուլ և Լիւրի կայարանների վրա, նետեց երեք ռումբ, ռումբերի պատճառած վնասները աննշան են։ Ֆրանսիական զօրքերը գնդակներ արձակեցին աէրօպլանի վրա և հարկադրեցին անյայտանալ։

ՓԱՐԻԶ.—Պօնտամուսոնի ռմբակոծումը նոր ապացոյց է տալիս գերմանական դանդաղաշարժ թնդանօթաձիգների վատ գործածութեան մասին։ Հարիւր ռումբը, որ հարիւր կիլոգրամ են կշռում, որոնք երէկ ընկան, այն հետևանքն ունեցան, որ 4 մարդ սպանվեց և 12-ը վիրաւորվեց։ Ռմբակոծութեան բարոյական ներգործութիւնը աննշան է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Յուլիսի 31-ին գերմանական երկու յածանաւ ռմբակոծեցին Դագերօրդ փարոսը։ Կարվեց 20 թնդանօթ։ Ոչ մի վնաս չէ հասցված։

Այն տեղեկութիւնները, թէ աւստրիացիք շարժվել են դէպի Կամենէց-Պօդօլսկ, չեն ճշդվում։

Ռումինիայում պահեստիների զօրահաւաքը շարունակվում է։ Զօրքերը եռանդով վարժութիւններ են կատարում։

ՎԻԼՆԱ.—Պատերազմական գործողութիւնների սահմաններում գերմանացիք հետախուզումներ են կատարում աէրօպլանների օգնութեամբ, որոնց մեր զօրքերն աջողութեամբ ռմբակոծում են։ Սուվալկի նահանգում ընկել է մի աէրօպլան, որի մէջ գտնվել են գերմանացի 4 օֆիցերի դիակ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Գեներալ շտաբի գլխաւոր վարչութիւնը պաշտօնապէս հաղորդում է. «Յուլիսի 30-ին մեր զօրքերը 11 տեղում քանդել են երկաթուղագիծը և Տիլզիտ ու Շմալէնինկէն տանող հեռագրաթելերը։ Վիրժբալից դէպի արևմուտք գտնվող Տիլզիտ-Շմալէնինկէն խճուղին փչացրել են գերմանական զօրքերը։ Թշնամին յարձակում է գործում Ֆիլիպպովի վրա։ Մեր զօրքերը ցիրուցան արին հակառակորդին դէպի հարաւ-արևմուտք։

ՄԱՐԿԳՐԱԲՕՎ.—Երեան հանվեցին գերմանական զօրամասեր, արտիլէրիա և հեծելազօր։

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Գեներալ-շտաբի գլխաւոր վարչութիւնից։ Օգոստափառ Բարձրագոյն գլխաւոր հրամանատարը հրամայեց յայտնել ի գիտութիւն գործող զօրաբանակների պաշտօնեաների և ազգաբնակութեան, որ Ռուսաստանը կռւում է ողջ սլաւօնականութեան ընդհանուր թշնամու մարտահրաւէրով։ Լեհերը, ինչպէս ռուսական երկրի, նոյնպէս և Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի, որ ցոյց են տուել իրանց լօյալութիւնը, կը գտնվեն մեր զօրքի և կառավարութեան առանձին խնամակալութեան ներքոյ՝ նրանց անձը և գոյքը ամէն տեսակ բռնութիւններից ապահովելու մտքով։ Լեհերի անձի և գոյքի իրաւունքի որևէ տեսակ խախտումը, եթէ այդ դէպի Ռուսաստանը եղած թշնամական գործողութեան համար չէ, պատժվելու է պատերազմական ժամանակի օրէնքի ամենայն խստութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Զինւորական և ծովային մինիստրութիւնների բոլոր պաշտօնեաներին, որոնք գտնվում են ծառայութեան մէջ, իրաւունք է տրված հրաժարվել բնակարանների վարձման մասին կապած պայմանագրերից մի ամսվայ ընթացքում այն կարգադրութեան օրից, որը նրանց արգելք է լինում օգտվել վարձած բնակարանից։

Պետ. Դումայի նախագահը բելգիական պատգամաւորների պալատի նախագահից ստացաւ պատասխան հեռագիր Դումայի ողջոյնին, որի մէջ ցանկութիւն է յայտնված, որպէսզի իրաւունքի ու արդարութեան համար կռւողների ջանքերն աջողութեամբ պսակվեն։

Ռումինական մամուլը խօսում է յօգուտ չէզոքութեան և կողմնակից է սպասողական դրութեան։

Համաձայն Պ. Հ. Գ. ստացած հեռագիրների, վիրաւոր և հիւանդ զօրականներին օգնելու գործը առաջ է գնում արագութեամբ, շնորհիւ առատ ստացվող նուիրաբերութիւնների։

ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 օգոստոսի

ՓԱՐԻԶ.—Վերադարձող ֆրանսիացիների տուած տեղեկութիւնների համաձայն, գեր-

մանական կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում հացի բերքը հաւաքելու համար։ Գալիցիայի գիւղական բանւորները ուղարկվում են Արևելեան Պրուսիա հացի բերքը հաւաքելու։ Բավարիայի դաշտերում աշխատող ռուս բանւորները, որ կամենում էին հայրենիք վերադառնալ, բռնվել և ուղարկվել են գիւղերը հաց քաղելու։ Անվստահութիւնը դէպի օտարահպատակները օրէ-օր աճում է։

Երբ պատերազմը սկսվեց, Ֆրանկֆուրտի սանատորիայում շատ օտարահպատակներ կային, մանաւանդ ռուսներ։ Սանատորիան անխնայօրէն դատարկեցին 24 ժամվայ մէջ։ Մի կին, որ հէնց նոր էր ծնել, արտաքսվեց Բեռն, ուր նա հասաւ կիսամեռ և մեռած երեխայով։

Գերմանական իշխանութիւնները ձերբակալել են Դոնաուէշինգէնում Ֆրանկֆուրտի (Մայնի վրա) ֆրանսիական գաղութի անդամներից մի քանիսին։

ԼՈՆԴՈՆ.—Փոստային կապը Ֆրանսիայի հետ 12-օրեայ ընդհատումից յետոյ աստիճանաբար վերականգնվում է։ Ստացված գերմանական լրագիրները պարունակում են բազմաթիւ վիրաւորական յօդուածներ Ռուսաստանի և Անգլիայի դէմ, հաղորդում են Բէլգիայում և ռուսական սահմանում գերմանացիների ձեռք բերած փայլուն աջողութիւնների մասին և ինքնագովութեամբ հաւաստացնում են, թէ գերմանական զօրքը Ռուսաստանի դէմ բաղկացած է 25 զօրաբանակից և նրանց միանալու են աւստրիական 16 զօրաբանակ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 օգոստոսի

ԼՈՆԴՈՆ.—Տեղումս գտնվող 15,000 ամերիկացիք կազմեցին մշտական կոմիտէտ իրանց հայրենակիցներին օգնելու համար։ Կոմիտէտը բաժանված է մի քանի սեկցիաների, որոնք նպատակ ունեն վերադարձնել հայրենիք ամերիկացիներին։

«Թայմսը» հաղորդում է, որ իռլանդական ոստիկանութիւնը ձերբակալել է շատ գերմանացի լրտեսների, որոնցից մօտ 100-ը կալանաւորվել են Դուբլինում և նրա շրջակայքում։

ԼՈՆԴՈՆ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ լորդ Րոբերտս նշանակվել է անդրօվկեանեան բոլոր գաղութային զօրքերի հրամանատար։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ. — Ստոկհոլմից տեղեկացնում են, որ «Սվէնսկա-Տագէբլատէն» լրագրում տպված է Բեռլինի թղթակցի հեռագիրը, որ ասում է. «Բեռլինը սպասում է, որ Շվէդիան կը գրաւէ, վերջապէս, պատշաճ դիրք. նա ոչինչ չի կորցնի, ընդհակառակն, կապահովէ իրան աչքի ընկնող տեղ ապագայում»։ Գեներալ Մատէրնը լրագրի խմբագրութեանը ուղարկեց խիստ բողոք, որ թելադրված է, ինչպէս ենթադրվում է, բարձր իշխանութիւններից։

ԼՈՆԴՈՆ.—Երեկոյեան լրագիրները հաղորդում են, որ ռուսական եռակայմ «Ինգբիրդ» նաւը Բալտիկ ծովից եկել է Դուվր՝ փայտեղէնի բեռով։ Նաւը Բալտիկ ծովն է մտել պատերազմի յայտարարութիւնից առաջ։

Բեռլինի ֆրանսիական դեսպան Կամբոնը Կոպէնհագէնից ժամանեց Լոնդոն։

ՊԱՐԻԶ.—Հոլլանդիան նորից պաշտօնապէս հաւաստիացրել է Ֆրանսիային իր չէզոքութեան և հոլլանդական զօրքի զէնքի ոյժով պաշտպանվելու մասին։

ՊԱՐԻԶ.—Ֆրանսիացի յայտնի իւրիսկոնսուլտ Կլիւնէն յայտնում է, որ գերմանական «Գեբէն» և «Բրեսլաու» յածանաւերի իրաւագիտական վաճառումը անվաւեր է, որովհետև հակասական է միջազգային որոշումներին։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնապէս յայտնվում է, որ մի քանի գերմանացի լրտեսներ զինւորական դատարանի վճռով գնդակահարվել են, ի թիւս որոց Տանա փոքր քաղաքի պօստային պաշտօնեան։

ՄՕՆԱԿՕ.—Համաձայն ֆրանս-մօնակեան համաձայնութեան, գերմանական և աւստրիական ազգութեան օտարազգիք արտաքսված են Մօնակոյից։

ՍՕՖԻԱ.—Ռուսական նոր եկեղեցում մաղթանք կայացաւ ռուսական զօրքին ու զէնքին յաղթութիւն շնորհելու համար։ Ներկայ էին օպպօզիցիայի լիդերներ, քաղաքական նշանաւոր գործիչներ, քաղաքի ազգաբնակութեան կողմից պատգամաւորութիւն և բազմաթիւ աղօթողներ։

ՉԻՖՈՒ.—Ցինգտաօյում պատերազմական նաւեր չը կան։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ. — «Կոր. Բիւրօյին» հեռագրում են Տրիէստից, որ «Բարօն Հաուզ» շոգենաւը, որ դուրս էր եկել Լուսինգրանդից դէպի Տրիէստ, ջրասուզվեց. առ այժմ ազատել են 130 հոգու և հանել են 20 դիակ։

ԹԷՀՐԱՆ.—Սպասվում է կաբինէտի փոփոխութիւն. նորից գլուխ կանգնելու է Մուստաֆա-ուլ-Մէմալիքը։ Արտաքին գործերի մինիստր նշանակվելու է Ալա-ուս-Սալթանէն։ Հրաժարվեց կաբինէտի մէջ մտնել Վոսուկ-ուդ-Դովլէն։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ներկայումս Լիէժի մօտ տեղի է ունենում ահեղ ճակատամարտ. ֆրանսիական, անգլիական և բէլգիական զօրքերը աննկարագրելի ջարդ են տալիս գերմանացիներին։ Մանրամասնութիւններն առաջիկայում։

◆ Ռուսական զօրքերը յաղթական արշաւանքի են ձեռնարկել դէպի Գալիցիա։

◆ «Н. Вр.»-ի ստացած տեղեկութիւնների համաձայն, Թիւրքիայում զօրահաւաքը կատարվում է նկատելի դժուարութիւններով։

◆ Պետերբուրգում ֆինանսների մինիստրի օգնական Կուզմինսկիի նախագահութեամբ տեղի են ունենում խորհրդակցութիւններ՝ ձեռք առնելու հերթական միջոցներ պետական սովորական ծախքերը պատերազմի ընթացքում կրճատելու համար։

◆ Ամբողջ Չեխիայում ապստամբութիւն է։ Իբր գնդակահարված են մօտ 30,000 մարդ, նոյնքան էլ բանտ են դրված։

◆ Հաղորդում են, որ երկու անգլիական ռազմանաւ եկել են Սուտշիլդս՝ վնասված դրութեամբ։ Ռազմանաւերի վրա եղել են մեծ թւով վիրաւոր և սպանված։

◆ Չեռնոգորցիք արիաբար կռւելով՝ մի քանի կիլոմետր մտել են աւստրիական երկիրը։

◆ Իտալիայում օրէ-օր ընդարձակ չափեր է ընդունում հակաաւստրիական շարժումը։ Գերմանիայի և Աւստրիայի հետ երկաթուղային հաղորդակցութիւնը խզված է։

◆ Չը նայած Թիւրքիայում կատարվող զօրահաւաքին և չը նայած որ ամենաճիշդ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ գեներալ Սանդէրսի միսիան մնում է Կ. Պոլսում, Բ. Դուռը ճիգ է թափում ապացուցելու Ռուսաստանին և Ֆրանսիային, թէ Թիւրքիան իբր չունի ագրեսիվ մտադրութիւն Ռուսաստանի դէմ և իբր թէ գերմանացի գեներալին թիւրքաց զօրքի հրամանատար կարգելու տեղեկութիւնը սխալ է։

◆ Ինչպէս երևաց մայրաքաղաքի թերթերի տուած տեղեկութիւններից, այն օրը, երբ գերմանական դեսպանը դեսպանատան պաշտօնեաների հետ մեկնում էր Պետերբուրգից, յուզված ամբոխը ջարդեց գերմանական դեսպանատան շքեղ շինութիւնը։ Այժմ «Н. В.»-ի ասելով, մօտ 100 հոգի շատ խիստ պատիժ են կրելու այդ դէպքի առիթով։

◆ «Н. В.»-ում կարդում ենք. «Պետերբուրգի շատ շրջաններում անհանգստութիւն է նկատվում մայրաքաղաքի բաղդի համար գերմանական ծովային ոյժերի երևալու պատճառով։ Միանգամայն հեղինակաւոր աղբիւրներից մեզ յայտնում են, որ այդ բոլոր երկիւղները բոլորովին անհիմն են։ Կրօնշտադտը ռազմական տեսակէտից ամրացած է ամենացանկալի կերպով։ Բերդի յարմար դիրքը և զինւորական խաւերի վերջերս ցոյց տուած վերաբերմունքը բոլորովին ապահովում են պաշտպանութիւնը ոչ միայն այն գերմանական ծովային ոյժերից, որոնք կարող էին երևալ Ֆիննական ծոցում, այլև բաւական խոշոր ոյժերից»։

◆ Միացեալ Պետութիւնները նախազգուշացրել են Եապօնիային, որ եթէ վերջինս խառնվի միջազգային պատերազմին, այդ կը համարվի մարտահրաւէր, ուղղված Ամերիկային, որը և իսկոյն պատերազմ կը յայտարարէ Եապօնիային։

◆ Վիլհէլմ կայսրը մի նամակ ուղարկեց շվէդական կառավարութեանը, առաջարկելով միանալ երրեակ զինակցութեան, խոստանալով դրա համար տալ նրան Ֆինլանդիան։

◆ Սերբ զօրքերը մտնելով Բօսնիա՝ զէնք են բաժանում սերբ ազգաբնակութեան։

◆ Կալիշը առնելիս, գերմանացիք գնդակահարել են աւելի քան 50 խաղաղ բնակչի, այրել են քաղաքային տունը և բանտը, ուր կրակին զոհ են գնացել բոլոր բանտարկեալները։

◆ Մոսկվայի հրէաները որոշել են երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը մաղթանքներ կատարել, աղօթելով ռուսական զէնքի աջողութեան համար։

◆ Պարիզում տեղեկութիւն է ստացվել, որ գերմանացիք Լիէժը ձեռք ձգելուց յետոյ ազգաբնակութեանը ենթարկել են գնդակահարութեան։

◆ Լոնդոնում և Պարիզում իտալական դեսպանները կարևոր խորհրդակցութիւն ունեցան անգլիական և ֆրանսիական արտաքին գործերի մինիստրների հետ։ Դրանից յետոյ հաւանական է դառնում այն սենսացիոն տեղեկութիւնը թէ՝ Իտալիան վճռել է խզել իր կապերը երրեակ դաշնակցութիւնից և յարել երրեակ համաձայնութեան։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ երկրի դրութեան տէր հանդիսանում են բառիս բուն նշանակութեամբ գերմանացիք։ Վերջիններս, գեներալ Սանդէրսի ղեկավարութեամբ, ականներ են դնում Դարդանէլում և Բոսֆորում, ամրացնում են բերդերը և նորերը կառուցանում։ Սև ծովի եւրոպական ծովափը արդէն լի է ականներով։ Էնվէր-փաշան գերմանացիների աջակցութեամբ աշխատում է դառնալ դիկտատոր։

◆ Աւստրիացիների ռմբակոծութիւնից Անտիվարին կիսով չափ կործանվել է։

◆ Լուրերի համաձայն, Հիւսիսային ծովում անգլիական նաւատորմը ջարդ է տուել գերմանականին։

◆ Պետերբուրգի սպանական դեսպանատունը յայտնում է, որ անզօր է տնօրինելու Գերմանիայում և Աւստրիայում գտնվող ռուսների բաղդը։ Յիշեալ պետութիւնների կառավարութիւնների կարգադրութեամբ՝ սպանական հեռագիրները չեն տրվում։

◆ Կիէվում թղթի սով է։ Լրագիրները փոքրացրել են ծաւալը։

◆ Կիսլովոդսկում հայերը մաղթանք կատարեցին ռուսական զէնքի յաղթութեան համար։

◆ Կիէվի բուլգարական հիւպատոս Ֆարմանը, դժգոհ Բուլգարիայի բռնած դիրքից, հրաժարվել է իր կոչումից։

◆ «Р. У.»-ն լսել է, որ Ռուսաստանում գտնվող բոլոր աւստրիացիների և գերմանացիների խնդիրը՝ ընդունելու իրանց ռուսահպատակ՝ մերժված է ռուսաց կառավարութեան կողմից։

◆ Մոսկվայի կրպակատէրերը նոյնպէս, Թիֆլիսի խանութպանների նման, կամայականօրէն աւելացրին կենսական մթերքների գները։ Պահեստի զինւորների կանայք որոշեցին իրանց ձեռքով կտրել ագահ կրպակատէրերի դատաստանը։ Նրանք, թւով 300 հոգի, յարձակվեցին Սմոլէնսկօէի մեծ շուկայի կրպակների վրա և ջարդուփշուր արին մթերքները։ Երբ կրպակատէրերը փորձեցին ձեռնամարտ սկսել յարձակվողների հետ, նրանք մի լաւ դանակոծվեցին։ Միւս կրպակատէրերը իմանալով այդ դէպքը, իսկոյն իջեցրին մթերքների աւելացրած գները։

◆ Թիւրքիայում, Ցունաստանում և Րումինիայում գտնվող ֆրանսիացիք, ֆրանսիական կառավարութեան կարգադրութեամբ, մտել են ռուսաց զօրքի շարքերը։

◆ «П. К» հաղորդում է, որ Րօստովում (Դ. վ.) յուլ. 27-ին հայոց եկեղեցում պատարագ մատուցվելուց և Եկատէրինա կայսրուհու անուան հրապարակի վրա մաղթանք կատարվելուց յետոյ, քաղաքապետութեան ներկայացուցչին յանձնվեց հեռագիր յանուն Թագաւոր Կայսրի հայ ազգաբնակութեան կողմից, որպիսի հեռագրում արտայայտված էին հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ։

◆ Ֆրանսիացիներից գրաւված Միւհաուզէնը և Ալտկիրխը կառուցված են միջին դարերում։ Առաջինի բնակիչների թիւը հասնում է 100,000 մարդու, իսկ երկրորդը փոքրիկ քաղաք է՝ 4000 բնակչով։

◆ «Իկդամ» թերթին Երևանից գրում են, որ Բարձրագոյն հրովարտակը ստանալու օրը Երևանում մահմեդականները ցոյց կազմեցին միւս ազգութիւնների հետ, յետոյ դիմեցին նահանգապետի և զինւորական կառավարչի տների կողմը։ Ցոյցը վերջանալուց յետոյ, մահմեդականները ժողովվեցին մզկիթում, ու նամազից յետոյ մէջլիսի նախագահը աղօթք կարդաց Թագաւոր Կայսրի առողջութեան և ռուսական զէնքին յաղթութիւն պարգևելու համար։ Ճառեր արտասանվեցին հայրենիքի պաշտպանութեան համար կանչված զինւորների ընտանիքներին օգնելու։

◆ «Кавк.»-ին հեռագրում Պետերբուրգից. «Բէլգիայում սկսվել է առաջին մեծ ճակատամարտը, որին մասնակցում են երկու միլիոն զինւոր։ Գործում են ֆրանսիական 21 զօրաբանակ և բէլգիական 3 զօրաբանակ՝ ընդդէմ գերմանական 25 և աւստրիական 1 զօրաբանակների։

◆ «Н. В.»-ին հաղորդում են Վիէննայից, որ Աւստրիայում յամառութեամբ խօսում են Ֆրանց-Յովսէփի անյուսալի հիւանդութեան մասին։ Կայսրն առանց գիտակցութեան է, որը սակայն թագցնում են։ Սակայն կայսրի առողջութեան տեղեկութիւնը չափազանց յուզում է ազգաբնակութեան ղեկավար շրջաններին։

◆ Կազմակերպվում է բալկանեան նոր դաշինք Ռուսաստանին կողմնակից պետութիւններից։

◆ Պետերբուրգում ստացվել են լեհական թռուցիկներ, որոնցով յորդորվում է լեհերին միանալ աւստրիական և գերմանական զօրքերի հետ։ Այդ թռուցիկները աջողութիւն չեն գտել լեհ ազգաբնակութեան մէջ։

◆ Գերմանացի գեներալների մօտ բէլգիացիք գտել են քարտէզներ, որոնց մէջ նշանակված են այն տեղերը, որ գրաւելու էին գերմանացիք։ Քարտէզներում թւերով ցոյց է տրված, որ Բրիւսէլը պէտք է վերցվի օգ. 3-ին, Լիլը օգ. 5-ին, Պարիզը՝ օգ. 8-ին։ Վիլհէլմ կայսրը այնպէս է հաւատացած եղել իր աջողութեան մէջ, որ իր շքախմբի օֆիցէրներին ճաշի է հրաւիրել Պարիզի յայտնի ճաշարաններից մինում։

◆ Կեօլնի մայր տաճարը և միւս տաճարները գերմանական զինւորական իշխանութիւնները աշտարակների են վերածել, որտեղից պէտք է կրակվի աէրօպլանների վրա։

◆ Գերմանիայում տիրող սովի և անկարգութիւնների տեղեկութիւնները ճշգրտվում են Կոպէնհագէնում ստացված տեղեկութիւններից։

◆ «Г. М.»-ին հաղորդում են, որ սենատը իր բոլոր դիւանով ու արխիվով փոխադրվելու է Մոսկվա։

ՉԵԽԱՑԻ ԱՂԷՏԸ

«Berl. Tag.»-ին հաղորդում են Պրագայից, որ ողջ Չեխիան պատերազմական հրակայական զօրատեղի է դարձել։ Երկաթուղիները լցված են գնացքներով, որոնք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱԽԿՈՏԸ

(Սերբիական գրականութիւնից)

(Ստեֆան Իլիչ)

...Է՞հ, իմ պարոն, էդպէս կռիւներ դուք սկի չէք տեսել։

Հրացանները որոտում էին կայծակի նման, գնդակները թափվում կարկուտի պէս, իսկ ծուխը կանգնել էր որպէս մառախուղ։ Ծուխը պատել էր մեզ ամենքիս, և մենք ծխի մէջ շարժվում էինք ու կրակ արձակում թշնամու վրա, որի երեսը չէինք էլ տեսնում։

Հայա...

Մեր կռւից ես շատ բան չեմ յիշում. միայն այսքանն է միտս, որ գնդակները վզզալով շարունակ անցնում էին իմ գլխի վրայից, ականջներիս մօտից, և մենք ամենքս գնում էինք դէպի առաջ ու կրակում։ Թէ ուր էինք գնում, այդ մասին մեզ կարգին հաշիւ չէինք տալիս. մեզ հրամայում էին՝ գնալ դէպի առաջ, և մենք գնում էինք հնազանդ ու կրակ արձակում։

Այդ ժամանակ ես միայն մի բան էի մտածում, որ պէտք է թշնամուն սպանել, եթէ ոչ նա ինքը կը սպանի մեզ։

Էսպէս կռւում էինք երկար, ու կռւի հէնց թունդ ժամանակ մէկ էլ աջ թևս տաքացաւ յանկարծ ու թուլացաւ այնպէս, ինչպէս թուլանում է մարդու ձեռքը, երբ արմունկը սուր բանի է դիպչում։ Երբ թևս թուլացաւ էդպէս, հրացանն ընկաւ իմ ձեռքից. տեսնելով որ հրացանս ընկաւ, ես կռացայ վերցնելու, բայց հէնց այդ ժամանակ ես ինքս էլ թուլացած ընկայ նրա մօտ։ Եւ վերջին բանը որ յիշում եմ, էդ էն էր, որ երբ ընկայ, մօրս դէմքը արցունքոտ աչքերով անցաւ իմ առաջից և ամեն ինչ խլացաւ իմ շուրջը, ու ինձ թւաց, թէ ես պառկած եմ Դանուբի ափին ու լսում եմ նրա ձայնը։

Թէ ինչու այդպէս թւաց, այդ չեմ կարող ասել. միայն դրանից աւելի ոչինչ չեմ յիշում մեր կռւից։ Չեմ էլ յիշում թէ որքան ժամանակ էի մնացել էդպէս ընկած. միայն՝ երբ աչքերս բաց արի, ամենից առաջ տեսայ, որ արև կայ երկնքում, յետոյ՝ երբ փորձեցի ժաժ գալ, տեսայ որ թևս ծանր էր, սկի չէր շարժվում, ասես իմը չը լինէր, այլ մի փէտի կտոր, իսկ միւս ձեռքս երբ բարձրացրի, նկատեցի որ արիւնոտ է և սպիտակ։ Էդ որ տեսայ, իսկոյն գլխի ընկայ, թէ ինչ է պատահել ինձ հետ... Ու նորից մօրս դէմքը անցաւ իմ առաջից, և ես, առանց իմ կամքի, լաց եղայ երեսս հողին դրած։

Լաց լինելով ես մտածում էի, որ վիրաւոր եմ արդէն և շուտով կը մեռնեմ այս դաշտում ու վայրի թռչունները կը հանեն իմ աչքերը և կը ծւատեն ինձ, ու իմ տեղը ոչ ոք չի իմանայ, որ գայ տանի ինձ... Իսկ մայրս Դանուբի ափին, աչքը քցած հեռաւոր ճամբին, աղօթքներով կը սպասի ամեն օր... ու ես երբէք, երբէք չեմ դառնայ տուն, և իմ մայրը ի զուր կը սպասի Դանուբի ափին...

Էսպէս մտածում էի ես, մէկ էլ յանկարծ մի խուլ լացի ձայն լսեցի և սիրտս թընդաց. մտածեցի որ մենակ չեմ էստեղ, որ գոնէ մի ընկեր կայ ինձ մօտ, և ուզեցի տեսնել թէ ով է այդ։

Երբ զօրով, մի կերպ ձախ թևիս վրա թեքվելով՝ ես նստեցի՝ ինչ տեսնեմ։ Ամբողջ դաշտում հարիւրից աւելի մարդ պառկած անշարժ է, մրը երեսի վրա, մրը մէջքին, մրը կողքին կամ երկուտակված. նրանք ամենքն էլ պառկած էին անկարգ, ամենքի մօտ էլ արիւն կար։ Արևը դիպել էր նրանց դէմքին և պարզ երևում էր, որ նրանք մեռած են արդէն։ Այդ ժամանակ մի բան, որ ինձ զարմացրեց, էդ էն էր, որ նրանց հրացանները նրանց մօտ չէին, իմը նոյնպէս չը կար. թէ ուր էին տարել, ես այդ չէի հասկանում։ Երբ իմ ընկերներին տեսայ էդպէս թափված, մեղքս ինչ թագցնեմ, համ սարսափեցի, համ ուրախացայ։ Սարսափեցի, որ բոլորը մեռած են և շուտով ես էլ կը մեռնեմ, իսկ ուրախացայ նրա համար, որովհետև մենակ չէի...

— Բայց որտեղից լսվեց այն ձայնը,— մտածում էի ես և նայում դէս ու դէն,—երևի վիրաւորվածի մէկն է ձայն հանողը,— ասում էի ինքս ինձ։

Հէնց էս մտքի վրա էի, մէկ էլ յանկարծ մինը շարժվեց իմ կողքին, մի երկու քայլի վրա, և գլուխը բարձրացնելով նայեց ինձ արտասուքոտ աչքերով. նայեց էնպէս, կարծես թէ վախենում էր, որ իրան կը սպանեմ։

Նրա դէմքն ու ձեռքերը արիւնոտ էին և նա ինքը սաստիկ սպրդնած էր, ոնց որ պատի ծեփ։ Մի րոպէի չափ մենակ նայում էինք իրար ու ոչինչ չէինք խօսում։ Վերջը նա պառկած տեղը նստեց և հարցրեց, թէ իմ ինչն է վիրաւորվել։ Ես ուզեցի պատասխանել, բայց չէի կարողանում խօսել. ձախ թևիս վրա սողացի նրա մօտ և ասացի, որ թևս է վիրաւորվել, ու խնդրեցի մի բանով, եթէ կարող է, կապի վէրքս, որ նորից արիւն չը գնայ։ Երբ նա ստակապով կապեց իմ վէրքը վերջացրեց, ես հարցրի նրան, թէ նրա ինչն է վիրաւորվել։ Նա սկզբում, ինչպէս երևաց, չէր ուզում պատասխանել. ես էլ կարծում էի, թէ վէրքը սաստիկ ծանր է, դրա համար չէ կարողանում խօսել. բայց երբ մի քանի անգամ էդ մասին հարցրի նրան, նա ասաց, որ ինքը չէ վիրաւորվել և էնպէս ընկել է մեզ հետ։

— Էդ ինչպէս,—հարցրի ես զարմացած։

Նա նորից էս ու էն կողմը նայեց, կարծես մի բանից վախենում էր, ապա երեսը դարձրեց դէպի ինձ և պառաւի նման լացախառը ձայնով սկսեց.

— Գիտէք,—ասում է,—ինչ թագցնեմ ձեզանից, ես չեմ վիրաւորվել, ես վախեցայ, ասենք, չէ, էնպէս ընկայ,—ասում է։

Էս խօսքերն ասում էր ու էլի դէս ու դէն նայում, կարծես վախենում էր, թէ մէկը կարող է իր խօսքերը լսել։

— Գիտէք,—շարունակեց նա,—ես ինքս կրօշչերվացի եմ,—ասում է,—էնտեղ ծխախոտի առևտուր ունեմ... Դէ, դուք էլ իմ եղբայրն էք, խօսքը մեր մէջ մնայ,—ասում է,—երբ զօրքերը սկսեցին հաւաքել, ես վախենում էի, որ ինձ էլ չը տանեն, բայց հերթը եկաւ ինձ էլ հասաւ։ Երբ տեսայ որ էդպէս է,—ասում է,—ինձ էլ պէտք է տանեն կռւի, ես խանութս կողպեցի ու գնացի Միլօվան գիւղը, որ ինձ չը գտնեն... բայց ուժից ես փախչում. եկան բռնեցին ու բերին կռւի... Դէ, ինչ թագցնեմ ձեզանից,—ասում է,—ես սաստիկ վախենում եմ կռւից. կեանքիս մէջ արիւն չեմ թափած. հաւ սկի չեմ մորթել, որովհետև ինչպէս կարելի է անմեղ արիւն թափել։

Նա որ էդպէս խօսում էր, պէտք է ասեմ ձեզ, իմ բարկութիւնը գալիս էր, բայց որովհետև վէրքս ցաւում էր, բան չը խօսեցի. իսկ նա առաջվայ նման շարունակեց իր լացախառը ձայնով.

— Գիտէք,—ասում էր նա,—երբ մեր գունդը եկաւ էս բլրի մօտ, սիրտս վատ բան գուշակեց. ասի՝ «մեր տղայ, քու բանը բուրդ է, կնոջդ ու երեխաներդ էլ չես տեսնի»... իսկ ես,—ասում էր նա,—պէտք է ձեզ խոստովանեմ, կնոջս ու երեխաներս շատ եմ սիրում... Կռւին սկսելու ժամանակ նրանք որ իմ միտն ընկան, ամօթ չը լինի ասել, լացս եկաւ... Դէ գիտէք էլի,—ասում է,—կին ու երեխայ ունեցող մարդը ինչպէս կը լինի. եթէ ամուսնացած էք, կը հասկանաք,—ասում է։

Էսպէս լացախառը ձայնով, որ նա խօսում էր իր կնոջ ու երեխաների մասին, ես էլ յիշում էի իմ մօրը և քիչ էր մնում նրա պէս լաց լինեմ։ Բայց վա՜յ այն տղամարդին, որ լաց է լինում. լաց լինելու համար ծնված են միայն կանայք։ Նա էլի շարունակում էր խօսել իր կնոջ ու երեխաների մասին, և դեռ շատ կը խօսէր էդպէս, եթէ ես նորից չը հարցնէի, թէ ինչպէս է եղել, որ նա ընկել է մեզ հետ, առանց վէրք ստանալու։

— Դէ գիտէք,—ասաց նա,—երբ մեր գունդը սկսեց կռւել ու յարձակվել թշնամու վրա, ես ինքս էլ սիրտ առած գնում էի թշնամու վրա և ուրախ էի, որ թշնամուն կը յաղթենք. բայց, տէր իմ Աստուած, երբ հրացաններն սկսեցին տրաքտրաքել և գնդակները մէկը միւսի ետևից անցան իմ գլխով, սիրտս սկսեց դողդողալ, իսկ քիչ յետոյ, երբ իմ կողքի մարդիկ՝ մէկը միւսի ետևից հրացանները շպրտում և ընկնում էին գետին, իմ սիրտը նորից, ինչ թագցնեմ, սկսեց ուռի տերևի պէս դողդողալ, ու ես նորից յիշեցի կնոջս ու երեխաներիս,—ասում է,—և մտածեցի՝ թէ ինչպէս կը լինի նրանց բանը, եթէ ես էլ ընկնեմ էստեղ։ Կարծես,—ասում է,—երեխաներս կանչում էին ինձ. «հայրիկ, հայրիկ...»։ Ես, գիտէք, իմ երեխաներին շատ եմ սիրում,—ասում է,—երբ երեխաներիս ձայնը ականջս ընկաւ, կարծես մէկը ինձ ասաց. «պառկի, որ չը մեռնես»։ Եւ ես, մեղքս ինչ թագցնեմ, հրացանս ձգեցի ու պառկեցի, իբր թէ վիրաւոր... Ու հիմա, գոհութիւն Աստուծոյ, փրկված եմ, կարող եմ երեխաներիս ու կնոջս տեսնել... Եթէ դուք իմ երեխաներին տեսնէք,—ասում է,—շատ կը հաւանէք, ոնց որ աղաւնիներ լինեն, իսկ կինս,—ասում է,—հրեշտակի պէս կին է...

Այս ասելով նա սկսեց հեկեկալ և երեխայի պէս լաց լինել. և երկար, շատ երկար ժամանակ երեսը հողին կպցրած լաց էր լինում։

Էդ օրը երեկոյեան բժիշկները զինւորների հետ, ոնց որ փրկարար հրեշտակներ, եկան մեզ մօտ և սկսեցին վիրաւորների վէրքերը կապել ու նաշերով տանել։ Բոլոր վիրաւորները եօթը հոգի էին։ Երբ բժիշկը եկաւ մեզ մօտ, ընկերս սկսեց անհանգիստ շարժումներ անել և իսկոյն գոյնը թացրեց։ Բժիշկը իմ վէրքը կապել վերջացնելուց յետոյ՝ հրամայեց, որ ինձ տանեն ու դառնալով դէպի ընկերս հարցրեց.

— Ձեր որտեղն է վիրաւորվել...

Այդ ժամանակ ինձ արդէն տանում էին, էլ չիմացայ, թէ նա ինչ պատասխանեց, միայն երբ ետ նայեցի, տեսայ, որ նա բժշկին ձեռքերով էր բան հասկացնում, այնպէս, ինչպէս անում են խուլ ու համր մարդիկ։

Դրանից աւել էլ ոչինչ չեմ յիշում նրա մասին. ինձ շուտով տեղափոխեցին Բէլգրադի զինւորական հիւանդանոցը, իսկ թէ ինչ արին նրան, ուր տարան, մինչև հիմա էլ չը գիտեմ...

...Է՜հ, իմ պարոն, ես իմ կեանքում շատ մարդ եմ տեսել, բայց էդպէս վախկոտ սերբ սկի չեմ տեսել...

Թարգմ. Ս. Բ.

պահեստներ են տեղափոխում։ Գերմանացիների և չեխերի մէջև թագնված թշնամութիւն է նկատվում։ Չեխերը իրանց պահում են փակված, չեն մասնակցում գերմանացիների խանդավառութեան և դժկամութեամբ են գնում ծառայութեան։ Գիւղացիները կատաղութեան մէջ են։ Ցանքսերի գեղեցիկ բերքը մնում է առանց հաւաքելու և սպառնում է փտել հէնց արմատի վրա։ Աշխատող ձեռքեր չը կան։ Դաշտերում աշխատում են ծերունիները, կանայք և երեխաներ։ Կենսական մթերքների գները հետզհետէ բարձրանում են։

ԻՒՆՉ ԲԱՆ Է ՉԷԶՈՔՈՒԹԻՒՆԸ

Այս տերմինը (չէզոքութիւն=նէյտրալիտետ) երկու նշանակութիւն ունի. ամենից առաջ նա նշանակում է կրաւորական դիրք, որ բռնում է որևէ մէկը երկու ուրիշի վերաբերմամբ, և, երկրորդ, միջազգային իրաւունքի մէջ որոշում է պետութեան դիրքը, որ չի մասնակցում ուրիշ պետութիւնների մէջև եղած պատերազմին։

Գոյութիւն ունի չէզոքութեան երկու տեսակ։

Առաջին տեսակը՝ երբ պետութիւնը ամէն մի առանձին պատերազմի դէպքում յայտնում է իր՝ մասնակից չը լինելը նրան։ Ցետոյ գոյութիւն ունի մշտական կամ ըսկզբունքային չէզոքութիւն, երբ պետութիւնը վաղօրօք և մի անգամ ընդմիշտ հրաժարվում է մասնակցել բոլոր կողմնակի պատերազմներին, որոնք կարող են առաջ գալ ապագայում։

Այդպիսի չէզոքութեանը միւս պետութիւնների կողմից տրվում է ձևական նշանակութիւն։ Չէզոքութեան հաստատման այդօրինակ ակտը՝ նշանակում է չէզոքացումն, իսկ այն պետութիւնը, որ չէզոքութիւն է ստանում, կոչվում է՝ չէզոքացված։

Զօրով կպցված չէզոքութիւնը անհաստատ է, ինչպէս և արհեստական ստեղծումը դիպլոմատիայի։

Մշտական չէզոքութիւն պահպանելը երբեմն ապահովվում է միւս պետութիւնների երաշխաւորութեամբ, բայց այդ ապահովութիւնը ըէալ նշանակութիւն ունի մինչև այն ժամանակ, քանի դեռ չէզոքութեան պահպանման մէջ շահագրգռված են երաշխաւորները։ Այն պետութիւնը, որին իրանից վերցված պաշտպանողական միջոցների փոխարէն չէզոքութեան համար երաշխաւորութիւն է տրված, այդ երաշխաւորութիւնը նրան ծանր կացութեան մէջ է դնում՝ իր երաշխաւորներից կախված լինել։

Դրան ապացոյց ծառայում է Լիւքսեմբուրգի անպաշտպանութիւնը Գերմանիայի կողմից իր չէզոքութիւնը խախտելու դէմ։ Ինքնապաշտպանութեան միջոցներից զրկված, Լիւքսեմբուրգը չը կարողացաւ որևէ ընդդիմութիւն ցոյց տալ Գերմանիային, որը խախտել էր իր խոստումը նրա չէզոքութիւնը անտես անելով։

ԻՒՆՉ Է ՄՏԱԾՈՒՄ ԹԻՒՐՔԻԱՆ

Ռուսաստանի Թիւրքական դեսպան Ֆախրեդդին-բէյ վճռականապէս հերքում է իր կառավարութեան ագրեսիվ մտադրութիւնների մասին տարածված լուրերը։

— Մեր զօրահաւաքը,— ասում է դեսպանը,— ոչ այլ ինչ է, եթէ ոչ նախազգուշութեան միջոց։ Այն ժամանակ, երբ զօրահաւաք է անում Դանիան, Շվէցիան, անգամ Շվէյցարիան, Բ. Դուռը այլ կերպ չէ կարող վարվել։ Սակայն վստահանում եմ հաւատացնել ձեզ, որ մենք ոչ մի ցանկութիւն չունենք եւրոպական պատերազմում ակտիվ մասնակցութիւն ունենալու։

— Մենք բաւականանում ենք,— շարունակում է դեսպանը,— մտքերի առաւել կենդանի փոխանակութիւն ունենալ Աթէնքի կաբինէտի հետ, և շատ հնարաւոր է, որ Վէնիզէլօսի և մեծ վէզիրի տեսակցութիւնը, որ թողնվել էր մինչև այժմ, այս օրերս կայանայ։ Մենք աշխատում ենք միայն մի բանի համար, այն է՝ մեր իրաւունքները պահպանենք Քիօսում և Միտիլէնում, և մենք յոյս ունենք համաձայնութեան գալ Ցունաստանի հետ այդ հարցի վերաբերմամբ։ Ինչ վերաբերում է մեր որևէ ագրեսիվ մտադրութիւններին Բուլգարիայի դէմ, առաւել ևս Ռուսաստանի դէմ, դրա մասին խօսք անգամ չէ կարող լինել։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԲԱՆԱՁԵՒԸ

Պետերբուրգում մի խումբ ուսումնականներ և առաջադէմ ուղղութեան հասարակական գործիչներ, որոնք հետաքրքրվում են արտասահմանեան քաղաքականութեամբ ու համակրում են սլաւոններին, ժողովվելով Բրիանչանինօվի բնակարանում, ակադ. Բեխտերէվի նախագահութեամբ մշակեցին և ընդունեցին հետևեալ բանաձևը.

1) Գերմանիայի կանխամտածված յարձակումը սկզբում Ռուսաստանի, յետոյ Լիւքսեմբուրգի, Բէլգիայի, Ֆրանսիայի և Հօլլանդիայի վրա, առանց բաւականին հիմունքների և սոսկ Աւստրօ-Ունգարիայի միջազգային աւազակութիւնը պաշտպանելու նպատակով, դնում է Գերմանիային միջազգային համերկրացիութեան օրէնքից դուրս։ Պատերազմը, որ Գերմանիայի մեղսակցութեամբ անհամար վնաս է պատճառելու քաղաքակրթութեանն ու կուլտուրային, չը պէտք է աւարտվի առաջ, քան աշխարհի բարոյական զգացմունքին երաշխիք կը տրվի, թէ ապագայում չեն կրկնվի միջազգային նման աւազակութիւններ։ Դրա համար միջազգային իրաւունքի և եւրոպական տէրութիւնների անկախութեան համար կռւող երկիրները (Սերբիա, Ռուսաստան, Բէլգիա, Ֆրանսիա, Անգլիա) պէտք է սահմանեն միջազգային նոր հիմունք Եւրոպայում՝ հաշտութեան պայմանագիրը միաժամանակ ստորագրելու պայմանով։

Հօհէնցօլլէրն Վիլհէլմը, որին մօտիկ ապագայում պէտք է մատուցվէր, աւստրիացի Ֆրիդի ջանքերով, Նոբէլեան խաղաղութեան մրցանակը, և որ ստորացրեց միապետի իր բարձր կոչումը ապիկար ստով, յայտնելով թէ պատերազմը հետևանք է Գերմանիայի վրա գործված յարձակման, անձնապէս պատասխանատու է թափվող արեան համար։

Գերմանացիների զազիր վերաբերմունքը դէպի ռուսները Գերմանիայում, պատերազմի յայտարարութիւնից յետոյ, բացատրում է, թէև չէ արդարացնում, այն ամբոխի անկուլտուր վարմունքը, որ քարուքանդ արաւ Պետերբուրգում գերմանական դեսպանատան շէնութիւնը։ Միւս կողմից Էլզասում «Ֆրանսիայի յիշատակը» ընկերութեան նախագահին գնդակահարելը ստիպում է երկիւղ կրել, որ գերմանացի բարբարոսները ոչնչի առաջ կանգ չեն առնի, իսկ այդ, իր հերթին, վերին աստիճանի ցաւալի պատասխան-գործողութիւններով կանդրադառնայ։

2) Ցուցված՝ Բէլգիայի չէզոքութիւնը—որ ապահովված է Գերմանիայից եւս—ցինիկաբար խախտելուց և ոչնչացած այդ երկրի հերոսական վարմունքից, չէ կարելի չը ցանկալ, որպէս զի ժամ առաջ բէլգիացիներին օգնութեան հասնեն անգլիացի զօրքերը։

3) Ներկայ պատերազմի մէջ, որ կռիւ է միլիտարիզմի և գերմանացիների՝ եւրոպական միացած ժողովուրդների կուլտուրայի վրա գործադրած բռնութեան դէմ, գործը վերաբերում է նաև ինքնատիպ կուլտուրա ստեղծած սլաւօն ժողովուրդների անկախ գոյութեանը Եւրոպայի հողի վրա։ Այդ կռւում սլաւօն ժողովուրդների թւում Լեհաստանին վիճակված է կրել—ըստ պատերազմական գործողութիւնների վայրի պայմանների—առանձնապէս ծանր հետևանքներ։

Անհրաժեշտ է, որպէսզի Լեհաստանի վրա ընկնող հարուածները գնահատվեն ըստ արժանոյն ռուս հասարակութիւնից և կառավարութիւնից, և պատերազմի վերջում լեհական հարցը պէտք է, վերջապէս, լուծվի սլաւօնական եղբայրութեան ու արդարադատութեան հիմունքներով։

4) Գտնելով որ հասարակական հաստատութիւնները առանց այն էլ ճնշված են ծախքերով ու դժուարութիւններով պատերազմի պատճառով, անհրաժեշտ է ընտանիքներից անջատված զօրականների ընտանիքների ապահովութիւնն ամբողջովին դնել պետական գանձատան վրա։ Զօրքերի ընդունակութիւնը կախված է նրանց ոգևորութիւնից, իսկ պահեստների ոգին, ոգևորութիւնը բաւականին կախված կը լինի այն հաւատից, թէ իրանց ընտանիքները ապահովվում են տէրութիւնից։ Այդ պատճառով ամեն մի ընտանիքի, որ զրկված է կերակրող ձեռքից, վճարել անյապաղ ամեն ամիս նպաստ կառավարութիւնից ամսական 5 ռուբլի, որ պատերազմի ընդհանուր ծախքերի հետ կը կազմէ մօտաւորապէս ամսական 30 միլիոն ռուբլի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Օգոստոս ամսի հետ միասին՝ հրապարակ են գալիս մի շարք կարևոր խնդիրներ, որոնց լուծումը ներկայ քաղաքական դրութեան ժամանակ չափազանց դժուարին է։ Պատերազմը իր անակնկալ պայթումով ստեղծել է այնպիսի աննախատեսված հանգամանքներ ու խճճված դրութիւններ, որոնց դիմաւորման համար անպատրաստ էր մեր հասարակութիւնը թէ իր հաւաքական ամբողջութեամբ և թէ մասնակի անհատներով։ Ընտանիքների կեանքում և հասարակական հիմնարկութիւնների ներքին գործունէութեան ասպարէզներում ստեղծվել է մի տենդային դրութիւն. դերերը փոխվում են, աշխատողներից մի քանիսը ժամանակաւորապէս անջատվում են գործից և իրանց պաշտօնից, բաց է մնում նրանց տեղը։ Հասարակական հիմնարկութիւնների մէջ գոյացած այդ փոփոխութիւնն ու բացը մի կերպ կարգաւորելու և լրացնելու հոգսը, միացած առաջիկայ շրջանի գործունէութեան ծրագրի իրականացման հետ, կազմում է հասարակական հոգածութեան այժմէական առարկան, որի լուսաբանութեամբ զբաղվելու է մամուլը, որովհետև ստեղծված դրութիւնը և հասարակական հիմնարկութիւնների գործունէութեան շարունակութիւնը հրատապ հարցեր են և էական նշանակութիւն ունեն մեր հասարակական կեանքի համար։

Ամենից առաջ, հայերիս մէջ, անյետաձգելի լուծում և կարգադրութիւն է ստանալու դպրոցական-ուսուցչական հարցը. սա հասարակական խոշոր խնդիրներից մէկն է։ Ընդամենը երեք շաբաթ է մնացել մինչև դպրոցական նօրմալ կեանքի սկիզբը. խաղաղ և հանգիստ տարիներում ևս այսպիսի ժամանակ շատ գործ էր լինում կատարելու. ներկայումս դրա վրա աւելացել են պատերազմի բերած անակնկալները, որոնք և սպառնում են խանգարել ուսումն. տարվայ սովորական ընթացքը։ Չէ որ պետական-մինիստրական դպրոցների, նոյնպէս և մեր ծխ. ուսումնարանների դասատուներից ոմանք պահեստի զինւորների կամ պահեստի օֆիցէրների շարքերին էին պատկանում։ Ոչ ոք չը գիտէ, թէ որքան կը տևէ այդ դրութիւնը. այդ կախված է պատերազմի տևողութիւնից և պայմանաւորվում է նրա հետևանքներով ու հնարաւոր արդիւնքներով. յամենայն դէպս այդ չի պարզվի մինչև սեպտեմբեր, ուրեմն և յիշեալ վիճակի մէջ եղած ուսուցիչները չեն կարող դպրոց վերադառնալ, նրանց դասերը և դասարանները կը մնան առանց առաջնորդի և դաստիարակի։ Ի՞նչպէս և ո՞վ պէտք է փոխարինէ նրանց։ Այս երկու հարցերը շատ կարևոր նշանակութիւն ունեն. և պէտք է որ աւելի լուսաբանենք այս խնդիրը։

* * *

Դպրոցական ուսուցիչը վարձկան աշխատաւոր չէ, որի աշխատանքը գործ է դնում նրան վարձողը, և եթէ մի վարձկան հնարաւորութիւն չունի իր գործը լրիւ կատարել՝ իրաւունք ունենայ նրան հեռացված համարել և նորը հրաւիրել՝ նախկին աշխատանքը կատարելու։

Ուսուցչին իր գործի՝ դասատուութեան և աշակերտների դաստիարակութեան հետ կապողը միայն վարձը և ստացած ռոճիկը չէ. նիւթական վարձատրութիւնը մի օղակն է այն զօդի, որով վարժապետը միացած է այս կամ այն ուսումնարանի հետ. դրանից բացի կան և ուրիշ զօդեր, որոնք վերացական են և ընդգրկում են ուսուցչի և դըպրոցական աշակերտների փոխ-յարաբերութիւնը, փոխադարձ սէրը, իրար սովորելը, բարոյական այն մթնոլորտը, որտեղ ամեն ոք գիտէ իր պարտականութիւնը միւսի վերաբերմամբ։ Իսկական ուսուցչի համար այդ մթնոլորտը երբեմն աւելի մեծ նշանակութիւն ունի, քան ստացած ռոճիկը. այնպէս որ չէ կարելի ձգտել, որ աշխատանքի վարձատրութեան տեսութիւնը տառացի կերպով իրականացվի ուսուցիչների վերաբերմամբ։

Պատերազմ գնացող ուսուցիչներին փոխարինելու կերպը որոշելիս՝ դպրոցական հոգաբարձուները պէտք է ի նկատի ունենան այս պայմանը. նրանք չը պէտք է վերջնականապէս հեռացված համարեն այդ ուսուցիչներին, այլ պէտք է պահեն նրանց տեղը, իսկ նրանց պարտականութիւնների ժամանակաւոր կատարումը յանձնեն նոր ուսուցիչների։

Ասում են, որ պետական դպրոցների շրջանային հոգաբարձուն կարգադրել է, որ զէնքի կանչված ուսուցիչների տեղերը պահվեն և նրանց ռոճիկները տրվեն՝ մինչև որ հնարաւորութիւն կունենան վերադառնալ իրանց անմիջական պարտականութիւնների կատարմանը։

Պէտք է, որ մեր ծխ. դպրոցների հոգաբարձուներն ևս նոյն կերպ վարվեն. բայց վախենում եմ, թէ այդ անհնար լինի, որովհետև ծխ. դպրոցները աղքատ են, չունենեն այնքան յաւելեալ եկամուտներ կամ պահեստի դրամներ, որ և՛ իսկական ուսուցչի ռոճիկը վճարեն, և՛ ժամանակաւորապէս հրաւիրվածին վարձատրեն. սա մտահոգութեան արժանի հարց է, որի լուծման համար ամեն հնարաւոր միջոցի պէտք է դիմել և արդարութիւնը ոտի տակ չը տալու, և դպրոցական գործը չը խանգարելու։

Այսպիսի ծանր դրութեան ժամանակ և ընդհանուր բռնկումների օրերումն է, որ պէտք է գալիս մեր հասարակութեան կազմակերպված լինելը՝ նրա ինքնօգնութեան ընդունակութիւնը։ Խաղաղ ժամանակ մենք անտարբերութեան քօղն ենք գցում երեսներիս, կազմակերպման ոչ մի քայլ չենք անում, կարճատեսութեամբ չենք կարողանում գալիք օրերի որակը որոշել։

Այժմ, որպէսզի ընդհանուր հրդեհի ստեղծած տրամադրութեանը կուլ չը գնան և մեր ազգային դպրոցները, որոնք մեր հասարակութեան ամենից թանգագին սեփականութիւնն են, անհրաժեշտ է մեր հասարակութեան արտակարգ ուշադրութիւնը. հըրդեհը առ այժմ հեռու է մեզանից. գուշակութիւններով ու երկչոտութեան սարսուռի զառանցանքներով չը մթնեցնենք օրերս, ինքնօգնութեան դրօշակը պարզենք, զոհաբերութեան շարանը սկսենք, գաղափարական գործունէութեան փայլուն օրինակը տանք՝ նմանելու մեր նախնիքներին։ Թող հարուստը առատօրէն նպաստէ մեր դպրոցներին. թող պատերազմին չը մասնակցող կոյսերը և «փափկասուն տիկնայք» թողնեն իրանց մենակեցութիւնն ու ընտանեկան փարթամութիւնը և դասարան մտնեն՝ աննկատելի դարձնելու ուսուցչի բացակայութիւնը։ Թող Էջմիածինը չը յապաղի անհրաժեշտ կարգադրութիւններն անել և «դըպրոցական ֆոնդի» գործադրման սկիզբը դընելը։ Հասել է ժամը։

Դէպի գո՛րծ եւ դէպի զոհաբերութի՛ւն։

Գ. Տ.-Ռ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՓՕՐԸ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ

Աստրախան, 28 յուլիսի

Ամսիս 27-ին, կիրակի, տեղիս հայ հոգևորականութեան նախաձեռնութեամբ ս. Աստուածածին աւագ եկեղեցում կատարվեց հանդիսաւոր պատարագ և մաղթանք Կայսերական Տան արեւշատութեան և ռուսաց զէնքի յաղթանակի առիթով։ Ներկայ էր եկեղեցում հայ ժողովրդի մեծ բազմութիւն։ Մաղթանքի սկզբում՝ բացակայութիւնից նոր վերադարձած թեմ. առաջնորդը զգեստաւորված՝ կարդաց Թագաւոր Կայսրի Բարձրագոյն Հրովարտակը և այնուհետև պատշաճաւոր խօսք ասաց, ուր շեշտեց հայերիս միշտ հաւատարիմ հպատակութիւնը ռուսաց Գահին և արած ծառայութիւնները։ Ապա կատարվեց ծնկաչոք մաղթանք։ Սրանից յետոյ՝ երեք եկեղեցիների հոգևորականութիւնը, գլուխ ունենալով թեմակալ առաջնորդին, զանգակների ձայնակցութեամբ և «Ամենազօր» շարականը երգելով, խուռն ժողովրդով շրջապատված, դիմեց հանդիսաւոր թափօրով դէպի Ալէքսանդր II Ազատարար Կայսրի արձանը, որ բարձրանում է քաղաքային այգում։ Այդ հանդիսաւոր թափօրը քաղաքիս Մօսկօվսկայա գլխաւոր փողոցով անցնելիս՝ քանի գնաց, ստուարացաւ և այգու դռների մօտ արդէն երթևեկը դժուարացաւ։ Այստեղ արձանի առաջ նորից ծնկաչոք մաղթանք կատարվեց՝ և վերջը եկեղեցիների երգեցիկ խումբը ճաշակաւոր կերպով երգեց «Տէր, պահեա զԿայսր» ազգ. հիմնը, որը բազմաթիւ հայ և ռուս ժողովրդի «ուրրա»-ների տակ կրկնվեց։ Այնուհետև թափօրը շարականներ երգելով նոյն կարգով վերադարձաւ մայր եկեղեցի։ Թէ հայ և թէ ռուս ժողովրդի վրա օրվայ տպաւորութիւնը մեծ էր։

Բացի դրանից՝ ամսիս 26-ին Գ. քահ. Մկրտումեանի նախաձեռնութեամբ տեղիս ս. Աստուածածին եկեղեցում կայացաւ հայ հոգևորականների մասնաւոր խորհրդակցութիւն։ Խորհրդակցութեանը նախագահող Գէորգ ք., բանալով նիստը, ի միջի այլոց ասաց. «Ներկայ պատմական րօպէին մենք՝ հոգևորականներս և մեր ժողովուրդը անկարող ենք միայն հանդիսատեսի դեր կատարել։ Մենք ևս պարտաւոր ենք ակտիվ գործունէութիւն ցոյց տալ և մեզ ամենայարմար գործն է՝ ժողովարարութիւն կազմակերպել Աստրախանի հայ հասարակութեան մէջ դրամով, իրեղէններով՝ պատերազմող զինւորների անօգնական ընտանիքների օգտին»։ Առաջարկութիւնը ընդունվեց միաձայն և այդ առիթով հետևեալ որոշումներն եղան։

1) Աստրախանի հայ հասարակութեանը այդ բովանդակութեամբ կոչ անել տեղական ռուս թերթերի միջոցով։

2) Դրամով և իրեղէններով նուիրաբերութիւնները ընդունել ս. Աստուածածին եկեղեցում և կօնսիստօրիայի շէնքում միաբան քահանաների միջոցով առանձին հերթապահութեամբ, ուր դրված կը լինեն երկու ժապաւինեալ մատեան։

3) Նուէրների ընդունելութեան ժամեր նշանակել՝ առաւօտները 10—1 ժամը և երեկոները 5—7-ը։

4) Նուիրատուների անունները և գումարները պարբերաբար հրատարակել տեղական թերթերում։

5) Ժողովարարութեան գործը ղեկավարելու համար ընտրել մի յանձնաժողով, որի կազմի մէջ մտան՝ Գ. ք. Մկրտումեան (նախագահ), Ն. ք. Իլիադեան (գանձապահ), Գալ. ք. Քարտաշեան (քարտուղար), Ա. ք. Ճանճկեան և Դ. ք. Բախրեան (իրերով ստացված նուէրները պահպանող)։

6) Այդ բոլորի մասին կազմված արձանագրութիւնը Գ. ք. Մկրտումեանի և Ն. ք. Իլիադեանի միջոցով ներկայացնել թեմ. առաջնորդին ի տնօրինութիւն։

Առաջնորդը, գովելով միաբանութեան այդպիսի վերաբերմունքը, խոստացաւ շուտափոյթ տնօրինութիւն և մինչև անգամ հետևեալ օրը իր խօսքի մէջ, եկեղեցում, շեշտեց այդ մասին, հրաւիրելով հասարակութեանը՝ օժանդակել նուիրաբերութեան գործին։

Գէորգ ք. Մկրտումեան

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

«Մշակի» № 119-ում գրված էր, որ մեր քաղ. վարչութիւնը ձեռնարկել է քաղաքացիների անշարժ կայքերի վերագնահատութեան գործին, քանի որ մի կողմից արդէն 20 տարի էր այդ գործը երեսի վրա էր մնացել, իսկ միւս կողմից կարիք կար քաղ. վարչութեան բիւջէն մի փոքր աւելացնելու։ Այդ առիթով քաղ. վարչութեան իրաւասուներից ընտրված էր մի յանձնախումբ 4 հոգուց բաղկացած, որը անցեալ յունիսի 2-ին արդէն սկսեց գործունէութիւնը, որը վերջացաւ յուլիսի 7-ին։

Ես ևս դժբաղդութիւն ունեցայ այդ մասնախմբի անդամը լինելու. նա մեծ յոյսերով սկսեց քաղաքային կայքերի ինվենտարը նորոգել, հարթել կալուածական տուրքերի քանակութիւնը՝ ըստ իրանց արժողութեան։ Դժբաղդաբար եմ ասում, որովհետև գնահատողական մասնախմբի առաջ բացվեց մի այնպիսի սրտաճմլիկ տեսարան, որը ամեն թշուառութեան և աղքատութեան վկայական էր ներկայացնում մեր քաղաքի բնակչութեան տնտեսական կեանքի վերաբերմամբ։ Ամբողջ թաղաբաժիններ, տներ, կայքերի կուտակումներ դատարկ ու անմարդաբնակ էին, մանաւանդ «Բանդի-մահլա» կոչված քաղաքամասը, ուր առաջներում բնակչութեան ամենախիտ քաղաքամասն է եղել, երբ 85 տարի առաջ *) Հին-Բայազէտից գաղթելով մեր նախնիքը խռնվել է այդ թաղում, ի նկատի առնելով որ «Քավառ-չայ» գետը այդ թաղամասի երկարութեամբ է հոսում։ Մի խօսքով՝ այդ թաղը վերջերս գրեթէ դատարկված է բնակչութիւնից, որի մեծամասնութիւնը տարիների և տասնեակ տարիների ընթացքում՝ հարկից ստիպված՝ գաղթել է դէպի օտարութիւն՝ իր ընտանիքի ապրուստը հայթայթելու համար, թողնելով իր անշարժ կայքերը միանգամայն անտէր ու անտիրական...

Զարմանալի չէ, եթէ ասելու լինենք, որ կային տներ, որոնց տէրերը գնալով ուրիշ քաղաքներ՝ կամեցել են ձրիաբար յանձնել կողմնակի ընտանիքների ապրելու համար, բայց դարձեալ ցանկացողներ չեն գտնվել, և այդպիսով նրանց բնակարանները կամ փակ են մնացել կամ թէ քայքայված ու փլված «խարաբաներ» են ներկայացնում իրանցից... Սակայն ընդհանրապէս վերցրած՝ Բանդի-մահլա քաղաքամասում ոչ միայն մի կարգին տուն ու բնակարան չը կար, այլ և դրանցից մեծ մասը գետնափոր հիւղեր, կատակոմբներ, խարխուլ անկյուններ, անկերպարան խրճիթներ, գոմեր էին և այլն, որոնցից շատերը առանց փեղկերի, քանդված առաստաղներով, կիսափուլ պատերով... Սրանց, ահա, պէտք է գնահատէր քաղաքային մասնախումբը և տուրքի ու հողային հարկատուութեան ենթարկէր...

Աւելի սրտաճմլիկ էր այն, որ երբ քաղաքային հին ինվենտարում (табель) մի տանտիրոջ անուն էր կարդացվում, նրա շառաւիղն անգամ չէր երևում։ Հարցնում էք հարևանից, նոյն իսկ բարեկամից այդ տանտիրոջ գոնէ ժառանգների անունները, ոչ ոք չէ իմանում։ «Տէրը շուտուց մեռել է, իսկ որդիքը կամ թոռները ապրում են հեռաւոր քաղաքներում, ոչ ոք չէ յիշում նրանց»—պատասխանում են մերձաւորները։

Պէտք է երևակայել, թէ ինչ դրութեան մէջ պէտք է լինի այդպիսի քաղաքացիների ընտանեկան-սօցիալական դրութիւնը ընդհանրապէս, երբ հարևանը հարևանին չէ յիշում, երբ նոյն իսկ ազգականը՝ երկար տարիներ պանդխտութեան մէջ մնալով՝ մոռացվել է և խորթացել ամենքից... Դա մի սոսկալի իրողութիւն է, որը կարող է արտադրել միայն Նոր-Բայազէտի պէս աղքատիկ քաղաքը իր աղքատիկ բնակչութեամբ, որի ոչ քաղաքացիութիւնն է նշմարվում և ոչ գիւղացիութիւնը։ Դա մի տխուր պատկեր է, որ ծանր կօշմարի պէս ճնշում է մարդու հոգեկան զգացմունքները...

Գալով միւս քաղաքամասերին, կարող ենք ասել, որ միայն Կալեր և Տալիզին թաղաբաժինները մի փոքր բանի նման էին, որոնք տուեցին գնահատութեան մի որոշ գումար, քանի որ այդ քաղաքամասերումն են գտնվում թանգարժէք կայքերի և խանութների մեծ բաժինները։ Եւ ահա ամբողջ քաղաքի հինգ թաղաբաժինների (Կալեր, Տալիզին, Խաչեր, Բանդի-մահլա և Գաղթականներ) վերագնահատութիւնը միասին վերցրած դուրս եկաւ 790,000 ռ., ուրիշ խօսքով՝ հազիւ $^{3}/_{4}$ միլիոն գնահատութիւն, մի գին, որը ծիծաղելի պէտք է թւայ շատերին, քանի որ մեր ամբողջ քաղաքի կայքերն ու կալուածները—տներ, խանութներ, բոստաններ, կալատեղեր, բամատեղեր և այլն, բոլոր 2366 կտոր—չարժեն մի հայ կապիտալիստի, մի Մանթաշեանի կամ մի Միրզաբէկեանի գործարանին։ Աւելի ծիծաղելի կը լինի այն, որ մեր քաղաքում ամենաթանգ տունը կամ կալուածքը 10,000 ռ. անգամ չէ հասնում, բացի մէկից, որտեղ տեղաւորված է Նոր-Բայազէտի գաւառական բանտը և որը գնահատված է եղել առաջուց՝ նրա բարձր վարձագինը ի նկատի առնված՝ 14,000 ռ.։

Այդպիսով ուրեմն մեր քաղաքային անշարժ կայքերը նախկին գնահատութեան վրա աւելացրին միմիայն 270.000 ռ., այն է փոխանակ 520,000 ռ. կալուածների ընդհանուր գնահատութիւնը բարձրացվեց մինչև 790 հազար ռ., հետևապէս այժմեան տուրքի չափով ($7^{1}/_{2}\,{}^{0}/_{0}$) քաղ. անշարժ կայքերը ենթարկվելու են 5900 ռ. հարկատուութեան, մի ողորմելի գումար, որով մեր քաղաքը պէտք է բարելաւի իր տնտեսական պայմանները և բարեկարգի իր ներքին և արտաքին դրութիւնը։

Նոր-Բայազէտ Գ. Սինանեան

ՊՈՒՐԻՇԿԵՎԻՉԸ ԵՒ ՀՐԷԱՆԵՐԸ

Օդեսսայից Պետերբուրգ վերադարձող Պետ. Դումայի անդամները յայտնել են, որ Պուրիշկեվիչը գլուխ էր կանգնած Օդեսսայում տեղի ունեցած սօիւզնիկների ցոյցին։

Այն ժամանակ, երբ նրանք անցնում էին փողոցով, նրանց դէմը ելան հրէայ ցուցարարները, որոնց մէջ էին քաղաքի հրէայ ազգաբնակութեան ներկայացուցիչները, որոնք իրանց ձեռքերին տանում էին ուխտի տապանակը և Թագաւոր Կայսրի պատկերը։

---

*) 1820—30 թւականներին, որպիսի ժամանակից է սկսվում մեր քաղաքի հիմնարկութիւնը։ Գ. Ս.

Այդ տեսնելով Պուրիշկեվիչը մօտեցաւ և համբուրուեց նրանց հետ. համբուրեց ուխտի տապանակը և ճառ արտասանեց, որի մէջ յայտնեց, թէ այն ամենը, ինչ որ ինքը առաջ խօսել և մտածել է հրէաների մասին— այդ ամենը սուտ է և մոլորանք։ «Բոլոր խօսքերը ես յետ եմ վերցնում։ Այս մեծ պատմական օրը ես համոզվեցի, որ հրէաները նոյնպիսի հաւատարիմ հպատակներ են Ռուսաց Թագաւորին, ինչպէս և ես։ Ձը կան այլևս հրէաներ և ռուսներ, կայ միայն մի մեծ անբաժան ռուս ժողովուրդ»։

Դրանից յետոյ Պուրիշկեվիչը այցելելով «Одеск. Листокъ»-ի խմբագրատուն, ի միջի այլոց, նկատել է.

— Զարմանալի է ձեր տեղական աջակողմեան մամուլը։ «Знамя» լրագիրը առաջվայ նման շարունակում է հրէաներին վատաբանել։ Ապշեցուցիչ կարճատեսութիւն ունեն այդ «աջակողմեանները»։ Այսպիսի բացառիկ րոպէին ժամանակը չէ հրէաներին վատաբանելու, որոնք պատրաստ են պաշտպանելու հայրենիքը այնպէս, ինչպէս մենք ամենքս, ռուս քաղաքացիներս։ Ձեր ուշադրութիւնը պէտք է դարձնէք բոլոր քաղաքացիներին միացնելու վրա, և ոչ թէ նրանց անջատելու։ Տրամադրութիւնը ժողովրդի մէջ զուարթ է, լայն խաւերը այժմ չեն տարբերում հրէաներին ռուսներից, և յանցանք է աջակողմեան մամուլի համար խտրութիւն դնել նրանց միջև, որոնք կրծքով պատրաստ են պաշտպանել իրանց հայրենիքը...

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Քաղ. դումայի յուլիսի 31-ի նիստում, պահեստիների ընտանիքներին խնամելու համար կազմված յանձնաժողովի անդամներ ընտրվեցին հետևեալ իրաւասուները. Մ. Զ. Աւեթանդիլեան, Ս. Գ. Ալգազանեան, Շ. Վ. Ալեքսէեվ-Մեսխիեվ, Զ. Զորեան, Մ. Քանանեան, Գ. Ն. Կէյլ, Ա. Պ. Կորուլաշվիլի, Դ. Ի. Կորգանով, Ս. Ա. Կավերեվ, Դ. Վ. Մամուլեան, Ս. Ա. Մինէեվ, Մ. Ն. Նեպրինցեվ, Ս. Մ. Նունուֆարեան, Բ. Ա. Պոպով, Մ. Ի. Սվէշնիկեան, Ս. Խ. Սուլխանեան, Գ. Զ. Թամամշեան, Լ. Ֆ. Տիգրանեան, Գ. Մ. Խատիսեան, Ս. Ֆ. Խունդաձէ, Ս. Ֆ. Զրելայեվ, Ա. Հ. և Տ. Հ. Էնֆիաճեանները և բացի այդ՝ հետևեալ ընտրողները. Վ. Ի. Մովսեսեան, Ա. Ա. Շահվերդեան, Գ. Մ. Մուրինեան, Մ. Ի. Բերբերեան, Գ. Պ. Ղարաքեօզեան և Ի. Ն. Կվեզերելի-Կոպաձէ։ Այդ նոյն նիստում ընդունվեցին մի շարք դեկուցումներ, վերաբերեալ 1914 թ. ծախքերի նախահաշիւը կրճատելուն, քաղ. վարչութեան զէնքի կանչված ծառայողների ընտանիքների ապահովութեան, Թիֆլիսի քաղաքացի Գ. Մուրինեանի առաջարկութեան, որով նա իր Օրթաճալայի տունը յատկացնում է հիւանդանոցի համար, ուր կարելի է 50 մահճակալ դնել։ Դուման որոշել է շնորհակալութիւն յայտնել Գ. Մուրինեանին։

◆ Աւետարանական-Լիւտերական Կանանց Բար. Ընկ., ցանկանալով իր կողմից օգնութեան հասնել պահեստիների ընտանիքներին, 100 րուբլի է ուղարկել Նահանգապետին այդ նպատակի համար։

◆ Թիֆլիսի դեղատնատէրերը իրանց յուլիսի 21-ին կայացրած նիստում որոշել են զէնքի կանչված պահեստիների ընտանիքների օգտին, սոյն օգոստոսի 1-ից սկսած, իրանց դեղատները մտած ամեն մի դեղատոմսից 1-ական կոպէկ յետ գցել։

◆ «Եասլի» ընկ. մինչև պատերազմի վերջը իր միջոցներով խնամելու է պահեստիների 10 երեխայ։

◆ Օգոստոսի 1-ին հրէաների սինագոգում տեղական ընկերութեան նախաձեռնութեամբ մաղթանք կատարվեց ռուսաց զէնքին յաղթութիւն շնորհելու համար։ Մաղթանքից յետոյ զգացված ճառ արտասանեց ռաբբի Մարկուսը։ Մաղթանքին ներկայ էին Թիֆլիսի հրէական ընկերութիւնը իր ամբողջ կազմով, որը մի հեռագիր ուղղեց փոխարքային, խնդրելով այն աըկանել առ ոտս Գահի։

◆ Օգոստոսի 1-ին Թիֆլիսում ապրող սերբերը ցոյց կազմեցին։ Ցուցարարները ազգային դրօշակներով, ազգային հիմն երգելով, «ուրա» աղաղակելով անցան Գոլովինսկի պրոսպեկտով և մտան Դվորցովայա փողոցը։

◆ Օգոստոսի 1-ից աշխատանքները քաղ. վարչութեան մէջ լինելու են մինչև ժամը $3^1/_2$-ը։ Ծառայողների համար եղած արտօնեալ օրերը վերացվում են։

◆ Փոխարքայի խորհուրդը որոշել է Մուղանի դաշտավայրում երևացած մորեխը ոչնչացնելու համար 225,000 րուբլի յատկացնել։

◆ Փոխարքայի խորհուրդը, քննելով Տնայնագործական Կոմիտէտի միջնորդութիւնը, գեմստվային միջոցներից երեք տարվայ համար (1915—17 թ. թ.) 327,054 րուբլի նպաստ յատկացնելու մասին, որոշեց Կոմիտէտին նպաստ տալ 151,473 ր.։

◆ Դերձակներ Ի. Մ. Շերեմետեվ, Ի. Զ. Կրեչեվսկի, Ս. Ի. Գոլովինսկի և ուրիշներ դիմել են Նահանգապետին, խնդրելով թոյլ տալ Թիֆլիսում բանալու «Общество портныхъ Тифлиса и Тифлисской губ.», որի նպատակն է լինելու իր անդամներին հնարաւորութիւն տալ էժան գներով դերձակութեան վերաբերեալ իրեր և առարկաներ ձեռք բերել։

◆ Քաղաքային վարչութիւնը մտադիր է ժամանակաւորապէս փակել աշխատանքի բորսան և բորսային շէնութեան մէջ թէյարան բանալ աղքատների համար։

◆ Թիֆլիսում մի սայլ փայտը ներկայումս ծախվում է 10 րուբլով, փոխանակ 3—4-ի, ինչպէս ծախվում էր առաջ։

◆ Այսօր, օգ. 3-ին, Կոջորում, Ֆ. Վարդանեանի մանկական ակումբում կը կայանայ մարմնամարզական տօն, որը բաղկացած կը լինի երկու բաժնից։ Առաջին բաժնում կը մասնակցեն ակումբի անդամ-երեխաները, երկրորդ բաժնում «Սոկոլ» ընկ. անդամները։ Սկիզբը երեկ. ժամը 5-ին։

ՄԱՄՈՒԼ

«Нов. Вр.»-ն իր «Единая Россія» յօդուածում խօսելով ցոյցերի մասին գրում է.

«Ռուսական լեզուի մէջ տեղ-տեղ լսվեցին օտար ձայներ։ Սակայն այդ ժամանակ եթէ մի թարգման լինէր, նա կարող կը լինէր մեր լեզուով թարգմանել նոյն ոգևորված խօսքերը, ինչ որ մենք լսեցինք մեր շուրջը։ Ռուսաստանի ոչ ռուս քաղաքացիները իրանց ռուսներ զգացին։ Վերահաս վտանգի գիտակցութիւնը միացրեց նրանց և ամուր ձուլեց ընդհանուր հայրենիքի հետ։ Միլիոնաւոր մարդկանց սրտերում անտեսանելի կերպով ռուսացման կուլտուրօ-քաղաքացիական գաղտնի պրոցէս է կատարվում։ Բարոյապէս ռուսներ են դառնում և օտարացեղ ծագում ունեցող մարդիկ։ Պահպանելով իրանց անհատականութիւնը, նրանցից իւրաքանչիւրը ռուսական ժողովուրդների ընտանիքը մտնելով, դառնում է ռուսական կուլտուրայի կրող մարդիկ»։

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԽԱՐԲԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Կիւնդէմիր, 16 յուլիս

Կիւմկիւմի մէջ կառավարական տուն կը շինուի կառավարութեան կողմէ։ Այդ շէնքը պիտի բաղկանայ 24 առանձին մասերէ, և կառավարութիւնը չբաւականանալով ուղղակի և անուղղակի տուրքերու յաւելումներէն՝ աղնամի, աշարի, հողի, էմլաքի, թէմէթթիւ և այլ տուրքերու բարդումներէն, այդ շէնքի կառուցումն ալ, անոր բոլոր ծախսերն ալ բարդեր է մեր շրջանի խեղճ շինականին վզին։ Դեռ անցեալները անհագին ծեծով, հայհոյանքով ու շամաթայով մեզմէ — Բասքան, Դողան, Կիւնդէմիր, Իյնալու և Դիադին (վերջին երկուքը քիւրդ) գիւղերէն գանձեցին 80 ոսկի, որպէս վարպետի վարձ։ Այժմ ալ անպակաս՝ ճակատագրական դարձած ծեծի, բռնութեան տակ մեր սայլերը կը բարձեն քարով, կիրով ու աւազով և շէնքի գործը մեր մէջքով առաջ կը տանին։ Ամեն գիւղ և գիւղի ամեն մարդ պարտական է երթալ իր գործիքով, իր մալով, իր սայլով հոն աշխատիլ և այն ալ այս օրերուն, երբ գիւղի բոլոր աշխատող ձեռքերը, մուինսիզ և մուինլի, զէնքի տակ են առնուած, գիւղական աշխատանքը երեսի վրայ կը մնայ... 40 օր է, որ մենք մեր ամբողջ ոյժը այդ Շարայի օրկորին ենք նուիրուած՝ մեր տուն ու տեղը, արտն ու ցանքը, չայի՜ն ու մալը, կինն ու զաւակները թողած, բայց ան ոչ կը վերջանայ և ոչ ալ վերջանալիք ունի։ Վարդովցի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԷՆ

Կ. Պոլիս, 19 յուլիս

Մահափորձ խըդիվին վրայ.—Արդէն իսկ հեռագիրներէն տեղեկացած ըլլալու էք Եգիպտոսի խըդիվ Աբբաս-Հիլմի փաշայի վրայ կատարուած կէս յաջող մահափորձը, երբ այս վերջինը Բաբը-Ալիէն կը մեկնէր Չէյխիւլ-իսլամին այցելելու համար։

Խըդիվը Բաբը-Ալիի մեծ դրան առջև ենթարկուեցաւ գնդակներու անսպասելի տարափի մը, որոնցմէ մին դէմ առ դէմ ծակեց իր ծնօտը և ջախջախեց մի քանի ատամները։ Խըդիվին հետևորդներն ալ անմասն չմնացին և ստացան զանազան վէրքեր, ինչպէս նաև պատահական անցորդներ ենթարկուեցան նոյն վիճակին։ Իսկ տերրորիստը, եգիպտացի Մահմուդ Մահզար, տեղն ու տեղը սպաննուեցաւ, բայց աւելի ճիշդ կըլլայ ըսել՝ սպաննեցին, որ ձայնն ու հոտը դուրս չելլէ։ Այդ միջոցին Բաբը-Ալիի կողմը կը գտնուիմ, դէպքին վայրին խիստ մօտ. նոյն շրջանակի խանութները, վաճառատուները և բոլոր շէնքերը կը փակուին անմիջապէս, ու փախող փախողի։ Ընդհանուր է յուզումն ու շուարումը։ Այսպէս է Կ. Պոլիս. արձակուած մէկ գնդակը ընդհանուր խուճապ մը կրնայ առաջ բերել։ Ոստիկանութիւնը շատ ուշ կը հասնի և շղթայի տակ կառնէ դէպքին վայրը այն ատեն միայն, երբ ամէն ինչ աւարտած էր արդէն։

Հազիւ թէ մահափորձէն մի քանի օր է անց, և ահա թերթերը լռած են և այլևս չեն խօսիր մահափորձին վրայ։ Զկարծուի սակայն թէ այս լռութեան պատճառը աւստրո-սերբ պատերազմը կամ համաշխարհային ընդհարումի մը երկիւղին շուրջ լրագրական լուրերու առատութիւնն է։ Ոչ երբէք։ Թիւրք թերթերը այսօր ալ դեռ սիւնակներ կը լեցնեն տիկին Քայիոյի մահափորձին և դատավարութեան լուրերու մանրամասնութիւններով։ Իթթիհատական օրգանները առաջին օրէն նոյնիսկ ջանացին ժխտել խըդիվի մահափորձին քաղաքական հանգամանքը և ի վերջոյ հազիւ-հազ կրցան խոստովանիլ սպաննիչին եգիպտացի ազգայնականներու խմբակցութեան պատկանիլը։ Այնու ամենայնիւ միշտ յեղյեղեցին, թէ Կ. Պոլսոյ մէջ կուսակից կամ մեղսակից չունի։ «Թասֆիրը Էֆքեար» իթթիհատական խենթ օրգանը նոյն իսկ կարծես յայտնի գոհունակութիւն մը կը զգար պատահածէն։ Արդէն ժողովրդական առածը չըսե՞ր թէ գիւղ մտիր և ստոյգ լուրը կամ երախայէն կամ խենթէն առ։ Մեծ-եպարքոս Սայիդ-Հալիմ փաշա, որ ազգական է խըդիվին, պատահած մահափորձէն, կերևի, միակ ազդուողն է կառավարութեան շրջանակներու մէջ։ Սայիդ Հալիմ փաշա այս դէպքին վաղորդայնին մէկ օր չեկաւ պաշտօնատուն, բայց վերահաս քաղաքական ծանր դէպքերը կերևի մինչև պաշտօնէ հրաժարում չկրցան մղել զինքը։

Հեթում Հատեան

◆ Պոստ-հեռագրատան վարչութիւնը մեզ խնդրում է տպել, որ պատուիրած (заказное) նամակներ ուղարկելը գործող զօրաբանակների հասցէին — չեն թոյլատրվում, և եթէ լինեն՝ տեղ չեն հասցվի։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. գրադարանը, որ վերանորոգութեան պատճառով ժամանակաւորապէս փակված էր, օգոստոսի 4-ից կը բացվի։

ԿՈՎԿԱՍ

◆ Ինչպէս հաղորդում են Պետերբուրգից, Գանձակի փոխ-նահանգապետ Օբոլենսկի փոխադրվում է Խերսոն։ Նրա տեղ նշանակվում է Պրիմորեան շրջանի փոխնահանգապետ Լոդիժենսկի։

◆ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Բիբի-Հէյբաթի և գործարանական շրջանի բոլոր բանուորները գործի են կանգնել և գործադուլը վերջնականապէս դադարել է։

ԺԻՒԼ ԼԸՄԵՏՐ

Մի քանի օր առաջ հեռագիրները հաղորդեցին, որ Պարիզում վախճանվել է ֆրանսիացի յայտնի քննադատ և բանաստեղծ ու անմահների ակադեմիայի անդամ Ժիւլ Լըմետրը։

Ժիւլ Լըմետրը ֆրանսիական ինքնօրինակ քննադատներից մէկն է. նա միևնոյն ժամանակ յայտնի բանաստեղծ է և դրամատուրգ։ Ֆրանսիական գրական հորիզոնում Լըմետրը երևաց 80-ական թւականին, երբ «Revue Bleue»-ի մէջ նա սկսեց հրատարակել իր քննադատական յօդուածները. իր ժամանակին առանձնապէս մեծ աղմուկ հանեց նրա յօդուածը Ռընանի մասին։

Ժիւլ Լըմետրը ծնվել է 1858 թւին։ Պարիզում միջնակարգ կրթութիւն ստանալուց յետոյ, նա սկզբում իր գործունէութեան ասպարէզ է ընտրում մանկավարժութիւնը, և մի քանի տարի շարունակ ուսուցչութիւն է անում Ֆրանսիայի զանազան քաղաքներում, և միայն այն ժամանակ, երբ նրա անունը, որպէս հոտառու քննադատի, լայն համբաւ է ստանում, նա որոշում է ամբողջովին նուիրվել գրականութեան։

«Իմպրեսիոնիզմ» ուղղութեան պարագլուխ և հոգով «սկեպտիկ», Լըմետրը, որպէս քննադատ, առաջադրում էր՝ ամեն տեսակ «սիստեմներից» և «տրադիցիաներից» ազատ ստեղծագործութեան պահանջներ և անձնական տպաւորութիւններով ու անհատական գնահատումներով էր մօտենում գրական երկերի վերլուծութեան։ Ունենալով գեղարուեստական մեծ ճաշակ, կրթված լինելով դասական գրականութեամբ, և միևնոյն ժամանակ օժտված լինելով փիլիսոփայական և հոգեբանական նուրբ վերլուծողի շնորհքով, նա կարողացաւ տալ գրական մի շարք դէմքերի բնոյթագծեր և գեղարուեստական երկերի քննադատութիւններ, որոնք իրանց նմանը չունեն նրբութեան և ինքնօրինակութեան տեսակէտից։ Այդպէս են նրա քննադատական տեսութիւնները Ռընանի, Վիկտոր Հիւգոյի մասին և ուրիշ շատ յօդուածներ, որոնք այժմ հրատարակված են «Contemporains» և «Impressions du théâtre» ժողովածուների մէջ։

Ժիւլ Լըմետրը և բեղմնաւոր դրամատուրգ է, սակայն նրա պիէսները, ինչպէս և նրա բանաստեղծութիւնների երկու հատորները այն աջողութիւնը չունեցան, ինչ որ նրա քննադատական գրուածքները։

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ
„ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԵՄԸ"
(Քննադատական վերլուծութիւն) գրքոյկը, եր. 97, գինը 20 կոպ.։

Դիմել «Գուտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառներին և «Մշակի» խմբագրութեան։ Բագու՝ «Сегаль» գրախանութին։ Նոյն տեղերը վաճառվում են հեղինակի միւս երկերը։ (օ. Ժ.) 716. 10—9

Ղուբայի հայոց Ստեփանոսեան ծխ. երկդասեան երկսեռ դպրոցի համար հարկաւոր է մի միջնակարգ կրթութիւն ստացած և փորձված
ՍԻՐԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ
շաբաթական 24—26 դասերով. առաւելութիւն կը տրվի, ով ձեռնհաս լինի նաև միաձայն երգեցիկ խումբ կառավարելու եկեղեցում կիրակի և տօն օրերին պատարագի ժամանակ։ Ստանալու է տարեկան ռոճիկ 500 ր., դպրոցին կից սենեակ՝ որոշ յարմարութիւններով, ծառայ և վառելիք։

Ցանկացողները մինչև օգոստոսի 15-ը կարող են դիմել հետևեալ հասցէով. Куба (Бак. губ.), Попечителю Армянской школы, Григору Мартиросянцу.

ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ
Ինժեներ Գ. Զ. Եարալեան և Ընկ.
Թիֆլիս, Կվիրիլսկայա, 9, սեփ. տ.
Տնօրէնի տէլէֆօն № 9, Կառավարչի բնակարան 14—78.

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԼՐԻՒ ՍԱՐՔԱՒՈՐՈՒՄՆ

Գիդրօ-շոգե-նաւթա-էլեքտր. կայարանների՝ առանձին աւտոմատիկ յարմարութիւններով, որոնք ազատում են կայարանների վերաբերմամբ ունենալիք հոգածութիւններից։ Ջրհան, սառցային, սառոյց պատրաստող, փոշեմաքրիչ, Ջրաբաշխական կայարանների։ Վերանորոգումն և սարքաւորումն ջրաղացների, փայտասղոցարանի, բամբակազտիչ, ձիթհան և այլևս պատրաստող գործարանների։ Կատարելագործված վերելակների՝ մարդկանց և ապրանքների համար։ Կառուցում է—շարժիչներ և մեքենաներ բոլոր տեսակի տեխնիկ. և գիւղատնտես. նպատակների համար։ Կատարում է—ամեն տեսակ կաթսային, կամուրջային և այլ մետաղային աշխատանքներ։ Պատրաստում է—արտասահմանեան ֆիրմաների նորագոյն ձևերով չքեղ դարպասներ, ցանկապատներ, պատշգամբներ, բակեր և այլն։ Նախագծեր և նախահաշիւներ բոլոր մասնանշված աշխատանքների համար։
(Կ.) 175. 25--20

[illegible]

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ՀԻՊՆՕՏԻԶՄ ԵՒ ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ
ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԵՔԵՐՋԵԱՆԻ
Այս նոր ձեռնարկը կոչվում է
«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՂԱՔԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ»

Այս նոր Ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է, կարող է սովորել հիպնօզացնել, ներշնչել և սովորել նոր-հոգեբանութիւն, և գործադրել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր Ձեռնարկի արժէքի և ու ձրի բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետևեալ հասցէով.

Ռուսաստանից—Арутюну Шекержянъ, Вельяминовская ул. № 22 Тифлисъ. Արտասահմանից—Haroutun Shekerjian, 22 Weliaminovskaya, Tiflis, Caucasus, Russia.
(Կ.) 193. 25—22

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ., տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկական ԴԻԶԷԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հորիզոնական անգլիական շարժիչներ (մոտորներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ոյժին $^1/_2$ ֆունտ կամ 200 դրամ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «ԴԻՆԱՄՕ» ընկ. գործարանից ամեն տեսակի։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(Հ. Կ.) 551. 0—19

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/1. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկեան, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (բլինդօոն և այլ.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և գատ-գատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(օ. մ.) 720. 0—7

ԸՆԿԵՐ
ԲԱՐՈՅԱԿՐԹԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԼՐԱԳԻՐԸ
վերսկսվում է ամենաընդարձակ ծրագրով. (Առաջին համարը լոյս կը տեսնի երկուշաբթի, օգոստոսի 4-ին)։ Տարեկան 5 րուբ., կէս տարին 3 րուբ., ամսական 50 կոպէկ։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція газеты «ИНКЕРЪ». Дворцовая ул., Пале-Рояль.
(օ. մ.) 742. 3—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный